1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն ժամ

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յովհաննէս, Միքայէլ և Արշակ ԲՈՋԱՐՋԵԱՆՆԵՐԸ ամուսիններով սրտի անհուն կսկիծով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց թանկագին և անմոռանալի մօր՝

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ԲՈՋԱՐՋԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ներկայ ապրիլի 18-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ: Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, առաւօտ. ժամը 10-ին, բնակարանից (Օլգինսկայա փող., № 75) դէպի Քամոյեան եկեղեցին (Դվորցովայա փող.): Թաղումը Վերայի գերեզմանատանը:

267. 2—2

ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ

Ար. և Ա. Մ.

ԲՈՒԺԻՉ

Պահանջեցէք ամէնուրեք!

„ՆԱՐԶԱՆ" Սեղանատան „ԷՍՍԷՆՏՈՒԿԻ № 20."

ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19. ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական): ՍՄԻՐՆՕՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ): ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը): ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին):

ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская, д. Гургенова, №№ 8—10. Тел. 898.
Գլխաւոր պահեստը Վարչութեան կից՝ Պեատիգորսկում: Պրէյս-կուրանտները ձրի:
Դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.

(4.) առ. 224. 39—3

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Այսօր, կիրակի, ապրիլի 22-ին

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ նախաձեռնութեամբ տեղի կունենայ ՑԵՐԵԿՎԱՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ մանուկների համար

Մասնակցութեամբ դերասանների և սիրողների:

Կը խաղացվի

„ԳՐԱՆՏ ՆԱՒԱՊԵՏԻ ՈՐԴԻՔԸ"

Փոխադրած Ժիւլ-Վերնի համանուն վէպից, պիէս 5 գործ., թարգմ. Տէր-Գէորգեանի: Մասնակցում են՝ Աղայեան, Աճարոնեան, Ամպերեան, Երամեան, Մամիկոնեան, Միրաքեան, Միրզոյեան, Վարդիթեր և ուրիշները:

✦ Տեղերի գները 1 րուբլուց մինչև 10 կոպէկ:

✦ Սկիզբը ցերեկվայ ժամը 11-ին:

Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում

Ռեժիսոր՝ Վ. ՄԻՐԶՈՅԵԱՆ Կարգադրիչ՝ ՅՈՎ. ԱԲԱՋԵԱՆ

առ. 277. 1—1

Կիրակի, ապրիլի 29-ին, առաւօտեան ժամը 11-ին ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ (Абасъ-Абадская пл. № 7.) նշանակված է

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ՕՐԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ. 1) 1911 թ. հաշուետուութիւնը և վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը Ընկ. գործունէութեան մասին, 2) 1912 թ. նախահաշուի քննութիւնն ու հաստատումը, 3) Ընկ. Բագուի ճիւղի մասին զեկուցում, 4) Երևանում ճիւղ բաց անելու հարցը, 5) պաշտօնավար անձանց, այն է՝ Վարչութեան ինքնակամ հրաժարված 3 անդամի և 5 փոխ-անդամի, խմբագրական մասնաժողովի հերթով դուրս եկող 3 անդամի և 5 փոխ-անդամի և վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի ու 2 փոխ-անդամի ընտրութիւնը, և այլ հերթական հարցերի քննութիւնը:

(4.) առ. 274. 2—1

Ախալցխայի հայոց ս. Փրկիչ եկեղեցու Հոգաբարձութիւնը յայտարարում է, որ ներկայ տարվայ մայիսի 13-ին, ցերեկվայ ժամը 12-ին, հոգաբարձական գրասենեակում նշանակված է ԱՃՈՒՐԴ առանց կրկնաճուրդի, կապալով տալու ս. Փրկիչ եկեղեցու Ախալքալաքի գաւառում գտնված Կարզախ և Սուլդա գիւղերի արօտատեղերը և [illegible] ու նոյն գիւղերի նաղելի տասանորդի եկամուտները: Ցանկացողները պայմանների մասին կարող են տեղեկանալ մինչև աճուրդի օրը, դիմելով Հոգաբարձութեան գրաւոր կամ անձամբ:

Նախագահող՝ Ստ. Ստեփանեան
Քարտուղար Ս. Ճղմաճեան

(ա. օ.) առ 276. 3—1

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ԱԼՄԱՆԱԽ ՏԱՐԱԶ

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ մահվան քառասունքին, ապրիլի 25-ին, լոյս կը տեսնէ ՏԱՐԱԶԻ բացառիկ № 4 Ալմանախ, նուիրված նահապետ-դրամատուրգին, իր և իր շուրջ մեծաքանակ պատկերներով: Այս հրատարակութեան գինը մինչև ներկայ ապրիլի 15-ը՝ ՄԷԿ րուբլի, այնուհետև մինչև ապրիլի 25-ը՝ ԵՐԿՈՒ րուբլի, իսկ լոյս տեսնելուց յետոյ՝ ԵՐԵՔ րուբլի:

Դիմել՝ Бюро Печати, Тифлисъ. Головинскій пр., 41.

առ. 26. 0—5

Շաբաթ, ապրիլի 28-ին, ցերեկվայ ժամը 12-ին

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ, ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻ շէնութեան մէջ

նշանակված է ԱՃՈՒՐԴ փակ ծրարներով

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԻ ԳԵՏԻՑ

20 վերստ տարածութեամբ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՆՑՔ տանելու աշխատանքների համար.

1) Ջրանցքի համար զանազան գրունտների և խորունկ ձորերի ու փոսերի մշակումը մօտ 12,000 խորանարդ սաժէն:
2) Հողաթումբեր (насыпы) բէզերմէներից, մօտ 500 խոր. սաժէն:
3) Քարէ պատերի հիմնարկութիւնը՝ ցեմենտային և կրային զանգուածով, մօտ 300 խոր. սաժէն:
4) Ջրանցքը բէտօնով ծածկելը, մօտ 800 քառ. սաժէն:
5) Ժամանակաւոր պատուարի շինութիւնը, մօտ 100 խոր. սաժէն:
6) Պատուարի երկաթային մասերը, մօտ 100 պուդ:

Աճուրդին մասնակցելու համար հարկաւոր է ներկայացնել գրաւական—հողային և ժայռային աշխատանքների համար՝ 2,000 րուբլի, արուեստական կառուցումների համար՝ (կամուրջներ, յենարան-որմներ, պատուարներ և այլն) 2,000 րուբլի:

Աճուրդի, մակարդակների, պայմանագրի նախագծի և այլ պայմանների հետ ծանօթանալու համար դիմել ամէն օր, բացի կիրակի օրերից, առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը Սինոդի Դիւանատունը, իսկ Երևանում՝ տեղական Կոնսիստորիան, ուր տրվում են բլանկներ յայտարարութիւններ ներկայացնելու համար:

(4.) առ. 245. 2—2

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Համալի Մասլահաթները

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.

Այս գրքի վաճառումից գոյանալիք գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին:

Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ", կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak",

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կիրակի, ապրիլի 22-ին
Գրականութեան ուսուցիչ Մ. ՄԱՏԷՆՃԵԱՆ
Հայերէն լեզուով կը դասախօսէ
հետևեալ նիւթի մասին

Ի՞նչպէս պէտք է գրքեր կարդալ

Դասախօսութեան սկիզբը առ. ժամը $10^{1}/_{2}$-ին. Տոմսակները 5—10 կոպ. արժողութեամբ ծախվում են Թատրոնի կասսայում:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ԿԸ ԼԻՆԻ ՀԱՄԵՐԳ

Ս. գ.—Հետևեալ կիրակի ուսուցիչ Ս. Յարութիւնեան կը դասախօսէ Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ մասին:

273. 2—2

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, ապրիլի 23-ին
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ՍԻՐՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ
Ռեժիսորութեամբ Պ. ՕՆԻԿԻ
Կը ներկայացնէ
ՇԻԼԼԵՐԻ

ԱՒԱԶԱԿՆԵՐ

Դրամա 5 գործ. և 8 պատկերով:
Մասնակցում է ամբողջ խումբը:
Սկիզբն է երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին:

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Թատրոնի կասսայում առ. ժամը 11—3-ը, իսկ երեկոյեան ժամը 6—9-ը:

Կարգադրիչներ՝ Ս. Նազարեան
և Ս. Սիմօնեան

առ. 275. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

ՊՐՕՖԷՍՈՐ ՊՕԶՆԷՐԻ ԱՍԻՍՏԵՆՏ

Խորհրդակցական կաբինետ Բեռլինում:

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին: Նաև կօնսուլտացիա միւս մասնագիտութիւնների:

Հասցէն՝ D-r Muradoff, Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon Amt Norden 113—19.

(Ե.Հ.Կ.) առ. 242. 12—5

ԲԺԻՇԿ

Գր. ՄԱԿԱՐԵԱՆ

Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ

Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանովսկայա փողոց, տուն Սէլլանովների, № 18, տելեֆոն 615.

Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը

(Ե.Հ.Կ.) առ. 819. 100—90

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:

Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում:

Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.

Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.

(Կ.Հ.ու.). առ. 179. 100—13

ՎԵՀ ՎԵՐԱՊՐՈՒՄՆԵՐ

Լէնայի Սիբիրեան հանքերում և Ատլանդեան Ովկիանոսի վրա տեղի ունեցած «Տիտանիկ» շոգենաւի աղէտները, որոնք ընկղմեցին համայն քաղաքակիրթ աշխարհը խոր սուգի մէջ, ունեցան սակայն և իրանց հրահանգիչ, կրթիչ կողմը:

Լէնայի հանքերի աղէտը ցոյց տուեց, որ մարդկային բնութեան մէջ գազանային կողմը դեռ շարունակում է հզօր կերպով գոյութիւն ունենալ: Մի խումբ մարդիկ, կուրացած ոսկի դիզելու տենչանքով, հրաժարվեցին մարդկային ամենադոյզն խղճմտանքից, և մարդկային հարիւրաւոր դիակների վրա կամեցան կառուցանել իրանց անձնական բարօրութիւնը: Այստեղ այլ ևս միայն կապիտալիստը չէ, որ հանդէս էր գալիս շահագործելու բանւորութիւնը, ոչ—որովհետև կապիտալիստների մէջ ևս կան բազմաթիւ մարդասէր անձինք,—այլ այստեղ մարդկային բնութեան ստոր, գազանային հակումներն էին բարձր ի գլուխ խօսում: Եւ այդ է պատճառը, որ ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը անէծքով է արձանագրում Լէնայի դէպքի հերոսների անունները:

Բայց ահա նոյն կապիտալիստը, շահագործող կապիտալիստը մի այլ տեղ մարդասիրական և ասպետական զգացումների այնպիսի վսեմ արտայայտութեամբ է պսակում իրան, որ հիացման և սքանչացման արժանի է:

«Տիտանիկ» շոգենաւի վրա, որի խորտակման ժամանակ ջրահեղձ եղան մօտ 1,500 հոգի, կային միլիարդատէր Աստորը, միլիօնատէրներ Շտրաուսը, Ռօտշիլդը: Եւ ահա վերջին րոպէին, երբ կարելի էր նաւակների մէջ նստելով ազատվել, մի նաւակի մէջ մնացել էր մի տեղ, որ կարող էր գրաւել միլիարդատէր Աստորը, բայց մի կին-աղախին մնացել էր նաւի վրա: Ո՞վ նստէր նաւակում. միլիարդատէ՞րը, թէ՞ հասարակ աղախինը. խնդիրը կեանք փրկելու մասին էր: Բայց միլիարդատէրը ասպետական զգացմամբ տեղը թողնում է աղախնին, որ նստելով նաւակի մէջ՝ ազատվում է, իսկ միլիարդատէրը կորչում է՝ խեղդվելով:

Միլիարդատէրը, դրդված ասպետական զգացմունքից, մոռանալով իր միլիարդները, որոշեց օգնել թոյլ էակին, կնոջը, և ազատել նրան իր սեփական կեանքի գնով:

Սա էլ կապիտալիստ է, Լէնայի հանքերի տէրերն ևս կապիտալիստներ են... Որպիսի՜ տարբերութիւն...

Եւ ահա, եթէ մի կողմից խորին յուսահատութիւն և լքումն է առաջ բերում մեր մէջ Լէնայի կապիտալիստների գազանային հակումները, միւս կողմից մենք վեհ վերապրումներ ենք ունենում տեսնելով Աստորի և Շտրաուսի պէս կապիտալիստների ասպետական վարմունքը, ինքնազոհութիւնը:

Այդ վերապրումները մեզ յոյս են ներշնչում, որ կը գայ մի օր, երբ մարդկային խիղճը, զգացումները այնքան կազնուանան, կը մաքրվեն, որ շահագործող և շահագործվող հասկացողութիւնները իրանք իրանց կը վերանան՝ մարդկային բնութեան ազնուացմամբ և կատարելագործութեամբ:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

20 ապրիլի

Մոսկվա.—Լէնայի դէպքերի առիթով գործադուլ արին Կոլոմէնի գործարանի բանւորները:

Մայրաքաղաքի թերթերի այն տեղեկութիւնը, թէ Լէնայի հանքերի դէպքերի քննութիւնը յանձնված է սենատոր Տրէպովին, անհիմն է. Առհասարակ որևէ քննիչ անձն նշանակելու հարց չէ յարուցված:

Արտաքին գործերի մինիստրը մեկնեց Եալտա:

Վիէննա.—Կրամարժը պատգամաւորութեան մէջ ասաց, որ եթէ ցանկանում են պահել եռապետեան դաշնակցութիւնը, այն դէպքում հարկաւոր է իբրև հակակշիռ բարի յարաբերութիւններ հաստատել Ռուսաստանի հետ: Այդ պատճառով հարկ է ցաւել աննեկսիայի իրագործման եղանակների համար. պէտք է յուսալ, որ վճիռ կը կայացվի հետևելու մերձեցման քաղաքականութեան ոչ միայն ռուսական պալատին կից, այլ և ռուս ժողովրդի մէջ:

Բեռլին.—Լանդտագին օրինագիծ ներկայացվեց Արևելեան-Պրուսիայի, Պօմերանիայի, Սիլեզիայի և Շլեզվիգ-Հօլշտէյնի նահանգներում գերմանական տարրը ուժեղացնելու մասին: Խնդրվում է 100 միլիոն մարկ գերմանական հողատիրութիւնը ամրապնդելու նպատակով հողաբաժիններ ձեռք բերելու, գերմանացի գիւղատնտեսներին և բանւորներին վաճառելու համար:

Ռէյխստագը փոփոխութիւն մտցրեց նախագծում. Քննութեան ժամանակ կառավարութեան կողմից հանդէս եկաւ Դէլբրիւկ, որ յայտնեց, թէ նախագծի փոփոխութիւնը չը պէտք է ընդլայնէ ռէյխստագի իրաւունքները, չը պէտք է սահմանափակէ կառավարութեան իրաւունքները:

Այդօրինակ մեկնութեան ժամանակ պետական կանցլերը պատրաստ է պատասխանել, պահելով իրան իրաւունք մի քանի դէպքերում հարցերը անպատասխան թողնելու:

Պարիզ.—Ֆէզից հեռագրում են, որ սուլթանը վերջին դէպքերի ազդեցութեան տակ նորից վերադարձաւ գահից հրաժարվելու մտքին: Այդ մտքի դէմ կռիւ են մղում Ռենիէն և գեներալ Մուանիէն: Լրագիրների տեղեկութիւնների համաձայն՝ 1911 թ. աշնանից արտաքին գործերի մինիստր [illegible] համաձայնութիւն է տուել, որ սուլթանը կարող է հրաժարվել:

Սոֆիա.—Դանեւը, գեներալ Մարկովը, [illegible] մեկնել են Լիվադիա Ֆերդինանդի կողմից Կայսրին ողջունելու համար:

1876 թ. ապրիլեան ապստամբութեան տարեդարձի օրը [illegible] Բուլղարիայի ազատագրութեան համար ընկած հերոսների յիշատակին, ներկայ էին մինիստրները, գեներալները. [illegible] Թագաւորի արձանի վրայ:

Լոնդոն.—Բէլֆասթի ածխահանքերի [illegible] կառավարութիւնը [illegible] րել ձեռնպահ մնալ Աթէնք պատգամաւորներ ուղարկելուց։

—

Լօնդօն.—Վեստէնդի թաղի գործադուլ արած դերձակների թիւը այժմ 15,000 է։ Առեւտուրը բանուորական քաղաքամասերը համարեա անանցանելի են։

—

Բրիւսէլ.—Պատգամաւորների պալատում սօցիալիստ պատգամաւորներից մէկը՝ ձեռնամարտի բռնվեց աջակողմեան մի պատգամաւորի հետ այն պատճառով, որ սօցիալիստը վիրաւորեց կղերականներին։ Նախագահը ըստիպված եղաւ նիստը փակել կէս ժամով։

—

Տօկիօ.—Ապարդիւն են այն ջանքերը, որ կատարվում են Իբարի հանքում աշխատող 145 բանուորների վիճակը պարզելու համար, բացի գտնըված 34 դիակներից։ Հնար չը կայ հանքը մտնել։

—

Պեկին.—Խորհրդակցական ժողովի նախագահ ընտրվեց Մուկդէնի պատգամաւոր Վուչժենլիանը, սրա օգնական՝ Խուբէյի պատգամաւոր Տանխուալանը։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

20 ապրիլի

Կ. Պոլիս.—Լէմնոսի ջրերում գտնըված իրերը ցոյց են տալիս, որ իտալական «Վարեզէ» զրահանաւը լուրջ վնասվել է Դարդանէլի բերդերի ռմբակոծութեան ժամանակ։

Դարդանէլով անցնելը իրապէս կարելի կը լինի ապրիլի 23-ից։

Փոխ-գնդապետ Խալիլ-Բէջա-բէյը նշանակվեց մակեդօնական վերակազմեալ ժանդարմերիայի պետ. ժանդարմերիան բաղկացած է 20,000 մարդուց։ Խալիլ-բէյի օգնական նշանակվել են երեք օտարազգի հրահանգիչ։ Վարչութիւնը կենտրոնանալու է Սալոնիկում։

—

Հռոմ.—Ստեֆանիի գործակալութիւնը հերքում է թիւրքական տեղեկութիւնը «Հումբերտօ» զրահանաւի կորստեան մասին։ Զրահանաւը անվնաս է և գտնվում է Տրիպօլիսի ջրերում։

Պետական եկամուտները յընթացս 1911 թւի յուլիսի 1-ից մինչև 1912 թւի ապրիլի 30-ը 62 միլիօն լիրայով աւելի են անցեալ տարի միևնոյն ժամանակամիջոցում ստացվածից։

Դարդանէլը բանալու իրողութիւնը նկատվում է քաղաքական շրջաններում և մամուլի մէջ իբրև ռուսական դիպլոմատիայի աջողութիւն։

Գեներալ Բէյսօլին ռմբակոծեց բազմաթիւ թիւրքական ուժերով գրաւված Լէբդուն և վերցրեց կատաղի կռւից յետոյ։ Թիւրքերը փախան կորցնելով 300-ից ոչ պակաս սպանված։ Իտալացիների կողմից սպանվեց 1 օֆիցեր, վիրաւորվեցին 3. սպանվեցին 7 զինւոր, վիրաւորվեցին 54։

—

Լօնդօն.—Լօրդերի պալատ։ Պաշտպանողական Նիւտօնը Դարդանէլի փակման առիթով մատնանշեց, որ Աւստրիան ճարպկութեամբ առաւ Իտալիայի համաձայնութիւնը՝ պատերազմական գործողութիւնները Ադրիատիկի և Սալոնիկի ծովի վրա չը տարածելու, և հարցրեց՝ թէ ինչու Անգլիան և միւս չէզոք պետութիւնները ձեռք չը բերին այդպիսի զիջումներ։

Նօրբերնհօլմը Իտալիայի կառավարութեանը հրաւիրում է վստահեցնել՝ թէ պատերազմի դաշտը կը սահմանափակվի։

Մօրլէյը տուեց երկար բացատրութիւն, որով ժխտեց, իբր թէ Իտալիան այդպիսի հաւաստիացումն է տուել Աւստրիային։ Մօրլէյը գտնում է, որ անգլիական կառավարութիւնը կատարեց չէզոք պետութեան պարտականութիւն. Թիւրքիան իրաւունք ունէր ամեն միջոց ձեռք առնել իր պաշտպանութեան համար, սակայն պարտաւորված էր նեղուցները բաց պահել չէզոք առևտրի համար. բացի ի շահ Թիւրքիայի ապահովութեան փակելու ծայրայեղ անհրաժեշտութիւնից, այդ անհրաժեշտութիւնը պարտաւորեցնում է Թիւրքիային ի չարը գործ չը դնել այդ սկզբունքը միւս պետութիւնների հետ պատերազմի բռնվելու դէպքում։

Համայնքների պալատ։ Ուղղված հարցապնդման դէմ Գրէյը գրաւոր կերպով յայտնում է, որ նրանից յետոյ, երբ Թիւրքիան յայտնեց Դարդանէլը բանալու մասին, երկու կռւող երկիրների կառավարութիւններին տեղեկութիւն տրվեց բրիտանական նաւագնացութեան կրած վնասները ամենայն մանրամասնութեամբ։ Ցաւակցութիւն յայտնելով չէզոք առևտրին պատճառած վնասների համար, Գրէյը կարծում է, որ վերստին նեղուցների բացումը վկայում է, թէ Թիւրքիան ուշադիր է չէզոք մեծ պետութիւնների շահերին։

—

Բերլին.—Լրագրական տեղեկութիւնների համաձայն, գերմանական «Լէվատ» նաւագնացութեան ընկերութիւնը յայտնում է, որ Դարդանէլի փակումը ամեն օր պատճառում է քառորդ միլիօն վնաս. նա դիմել է արտաքին գործերի մինիստրութեան խնդրելով քայլեր անել, որպէս զի վնասները հատուցվեն Իտալիայից և Թիւրքիայից։

—

Պետերբուրգ.—Առևտրի բաժանմունքը տեղեկացրեց հեռագրով հարաւային նաւահանգստային կօմիտէներին, որ Բ. Դուռը վճռել է ամենակարճ ժամանակում բանալ նեղուցները։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Րաշտ, 15 ապրիլի

Քարգանռուդ գաւառամասում տեղի ունեցած կռւի մէջ, որքան կարողացանք տեղեկանալ, ռուսաց զօրքից վիրաւորվել է 2 կօզակ, իսկ տեղացիներից սպանվել է մօտ 15 հոգի, նոյնքան էլ վիրաւորվել, մնացածների մի մասը ձերբակալվել է, իսկ մեծ մասը թաղնվել է լեռներում, որոնց, որքան տեղեկացանք, շրջապատել են ռուսաց զօրքերը։

Դրութիւնը դեռ անորոշ է այնտեղ, և, ինչպէս խօսվում է, տեղացիները օգնութեան են սպասում այն կողմերի լեռնային քիւրդերից և շահսեվաններից։

Այսպէս թէ այնպէս, դեռ գործը մանրամասն չէ պարզված և, ինչպէս երևում է, թէ Քարգանռուդում և թէ Խալ-Խալ գաւառամասում ռուսաց զօրքը պէտք է «քաշելիք» ունենայ, որովհետև այնտեղ էլ անհանգիստ տարրերը գլուխ են բարձրացրել։

Դեմօկրատ կոչվածները ցանկանում էին քաղաքակրթութեան առջև պարիսպներ քաշել և դրացի ազգերի միջև ատելութիւն էին սերմանում, իսկ ներքին կեանքում տերրօրներով էին զբաղված։

Եւ այդ կուսակցութիւն կոչված վիժուածքը Պարսկաստանի անկման պատճառ եղաւ։

Ծերունի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 21 ապրիլի

«Մշակի» 40-ամեակի տօնախմբութեան Յոբելեանական Յանձնաժողովը սրանով պատիւ ունի իր խորին շնորհակալութիւնը յայտնել մեծ. եղբ. Բաղդասարեաններին, Թիֆլիսում, որոնք նուիրեցին չորս հարիւր (400) ր. յօգուտ «Մշակի» հրատարակութեան ապահովութեան ֆօնդի։

Փոխ-նախագահներ Յանձնաժողովի՝
Յովհ. Սպէնդիարեան
Բժշկ. Բ. Նաւասարդեան
Արշակ Միլեան
Քարտուղար՝ Ստ. Մալխասեանց

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շաբաթ, մայիսի 12-ին, երեկոյեան կը ճանապարհվի Էջմիածնի երկաթուղու կայարանը և միւս օրը առաւօտեան կը հասնի Ղարաքիլիսա, ուր թէյ խմելուց յետոյ կուղևորվի դէպի Դիլիջան. այդտեղ կը ճաշէ, իսկ Քարվանսարայում կը գիշերէ։ Առաւօտեան դուրս գալով՝ Աղստաֆայում կը նստի № 2 արագ գնացք և ուղղակի կը գնայ Պետերբուրգ։ Մօսկվայում նրան կը միանայ Ներսէս արքեպիսկոպոսը։ Ոչ մի տեղ ոչ մի ընդունելութիւն չի լինի։ Պետերբուրգից վերադարձին կուղեկցեն նրան Ներսէս արքեպիսկոպոսը. Արմաւիրում՝ կը հանդիպէ Մխիթար եպիսկոպոսը, Բալաջարում՝ Անանիա արքեպիսկոպոսը, Գանձակում՝ Եփրեմ եպիսկոպոսը, Ղարաքիլիսայում՝ Խորէն եպիսկոպոսը, որոնք և հետը կը գնան Էջմիածին՝ Օծմանը մասնակցելու։ Օծումը կը լինի յունիսին. ժամանակը առանձին կը յայտարարվի։ Վերադարձի միջոցին կը լինեն ընդունելութիւններ։

«ՍՊԻՏԱԿ ԾԱՂԿԻ» ՕՐՎԱՑ ԱՐԴԻՒՆՔԸ

—

Երէկ, ցերեկով, քաղաքային վարչութեան շէնքի մէջ, ներկայութեամբ քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի, քաղաքային վարչութեան անդամ Գ. Ժուրուլիի, Թոքախտի դէմ Մաքառող Կովկ. Ընկ. վարչութեան անդամների, մամուլի ներկայացուցիչների և ոստիկանապետի օգնական կապիտան Ստրօյեվի տեղի ունեցաւ «Սպիտակ ծաղկի» օրվայ ընթացքում պատեցված դրամատուփերի բացումն ու դրամների հաշւումը։

Դրամատուփերի թիւը 420 էր։

Դրամատուփերը, որոնք նախընթաց օրվանից գտնվում էին քաղաքային վարչութեան գանձարանում, ոստիկանութեան հըսկողութեան ներքոյ, մաս առ մաս տարվեցին քաղաքային դումայի նիստերի դահլիճը, ուր և տեղի ունեցաւ դրամների հաշւումը պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի երդուեալ-հաշւարարների ձեռքով, վերևում յիշված անձանց ներկայութեամբ։

Ձեռնհաս մարդկանց ասելով, Թիֆլիսում հանգանակված գումարը պիտի որ գերազանցէ Կովկասի այլ քաղաքներում հանգանակված գումարներին։

Հաւաքված գումարի ընդհանուր քանակը կը լինի մօտ 18—20 հազար ռուբլի։

Տ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Ամսիս 14-ին Հասարակական Ակումբում (Բիրժա) տեղի ունեցաւ Տ. Մարգարեանի դասախօսութիւնը «Աշակերտութեան կամազրկութիւնը և կռիւ նրա դէմ» թեմայով։

Ընդհանուր հայեացք գցելուց յետոյ աշակերտութեան այս հիւանդոտ կողմի, այն է՝ կամազրկութեան վրա, դասախօսը անցաւ բուն նիւթի քննութեան նախ և առաջ մանրամասն և հոգեբանական տեսակէտից պարզաբանելով մեր առջև այն հարցը, թէ ի՞նչ ենք հասկանում առհասարակ կամք ասելով. ապա մի առ մի քննութեան ենթարկեց այն բոլոր հանգամանքներն ու պատճառները, որոնք առաջացնում են աշակերտութեան մէջ յիշեալ հիւանդութիւնը (կամազրկութիւն)։ Պատճառները կարող են ունենալ մասնակի և ընդհանուր բնոյթ։ Ըստ դասախօսի՝ պատճառներից գլխաւորներն են՝ ներկայ հասարակական պայմանները և ապա դպրոցը։

Սկսենք առաջին պատճառից, որը սակայն աւելի մասնակի բնոյթ է կրում։

1905 թւից սկսած համայն Ռուսաստանի աշակերտութեան մէջ այս կօշմար դառած հիւանդութիւնը գնալով անհամեմատ աւելի ծայրայեղութիւնների է հասնում, քան այդ առաջ էր. և դա ունի անշուշտ իր պատճառները։ Ինչպէս յայտնի է, այդ թւականից սկսվում է ռուսական ազատագրական շարժումը, մի փոթորկալի ու յուզումնալի շրջան, երբ ամբողջ Ռուսաստանը գտնվում էր ինչ-որ ճգնաժամի մէջ և ազատութեան գաղափարներով տոգորված ժողովուրդը յեղյեղուկ ու ալեկոծ դրութեան մէջ էր։

Այս բոլորը, ի հարկէ, արձագանք գտաւ նաև մատաղ աշակերտութեան մէջ. նա ևս զերծ չը մնաց ժամանակի մրրիկից և նոյն իսկ ակտիւ մասնակցութիւն էր ցոյց տալիս յիշեալ բոլոր մասսայական շարժումներին՝ դասադուլներ անելով և զանազան միտինգներ կազմակերպելով։ Եւ ի՞նչ եղաւ այս բոլորի հետևանքը։ Մրրիկն անցաւ, ամեն ինչ խաղաղվեց՝ և դարձեալ սկսեց խաղաղ զարգացման շրջանը։ Բայց ազատագրական շարժումների անմիջական ազդեցութիւնը իր ամբողջ զօրութեամբ երեւան եկաւ յետագայում, որը իր խոր ու անջնջելի կնիքը դրոշմեց թէ հասարակութեան, թէ գրականութեան և թէ առանձնապէս մատաղ աշակերտութեան վրա։

Կարծես, այս բոլորի տուժողը հանդիսացաւ միակ թշուառ աշակերտութիւնը. այդ շարժումների մէջ նա գործադրեց աննպատակ ու ապարդիւն իր ամբողջ թափը, էներգիան, սպառեց ապագայ բեղմնաւոր աշխատանքների համար գործադրվելիք նէրվերի (նեարդեր) ույժը և միանգամայն անընդունակ դառնալով ինքնուրոյն գործելու և դժուարին աշխատանքներ կատարելու՝ նա այժմ բոլորովին զրկվել է ուժեղ կամքից։

Ահա ուժեղ կամքի միանգամայն բացակայումը մեր աշակերտութեան միջից մատնել է վերջինիս կատարեալ անգործութեան ու մի տեսակ թմրածութեան։ Այժմ կեանքը աշակերտի համար ոչ մի հրապոյր չէ ներկայացնում, որովհետև նա, աշակերտը, մատաղ հասակում արդէն ապրել ու զգացել է այն, ինչ որ այժմ պէտք է զգար ու ապրէր, ճիշդ այնպէս, ինչպէս Պուշկինի հերոսներ՝ Ալէկօն, Օնէգինը և նման տիպեր։ «Ի՞նչ է կեանքը, նրա նպատակը», «ինչու ենք ապրում» և այլն—ահա այն շաբլօնական, բայց խոր փիլիսոփայական հարցերը, որոնք շարունակ տանջում են այժմեան աշակերտութեան մեծագոյն մասին և զբաղեցնում նրա միտքը։ Կեանքից հիասթափված աշակերտը ձգտում է այդ հարցերի լիակատար պատասխանը գտնել, բայց ոչ մի տեղից ճիշդ ու հաստատ պատասխան չը ստանալով՝ միակ միջոցը գտնում է այդ ծանր դրութիւնից ազատվելու համար դիմել ինքնասպանութեան։

Ահա սրանով է բացատրվում այն երևոյթը, որ 1905 թւից սկսած Ռուսաստանում գնալով՝ հետզհետէ ինքնասպանութիւնն աւելի լայն չափեր է ընդունում գլխաւորապէս աշակերտական շրջանում։ Եւ այս բոլորի պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կամքի լիակատար բացակայումը։ Ուրեմն աշակերտութեան այդ հիւանդոտ կողմը վերացնելու առաջին պայմանն է, որ կարելոյն չափ հեռու պահել տան հասարակութեան անմիջական ազդեցութիւնից, մինչև որոշ հասակը, երբ բոլորովին կը կազմակերպվի նրա բնաւորութիւնը, և այն ժամանակ միայն ընդունել հասարակութեան մէջ։

Սակայն, ինչպէս տեսանք, ներկայ հասարակական ու քաղաքական պայմաններից առաջացած այդ թերութիւնը պատահական է և մասնակի բնոյթ է կրում։ Կամազրկութիւնն ընդհանրապէս և աւելի զօրեղ կերպով առաջ է գալիս այժմեան դպրոցական անբնական պայմաններից։

Ահա այստեղ դասախօսը մի փոքր կանգ առաւ դպրոցների ներկայ մեթօդի վրա և բոլոր կողմերը մանրամասն անալիզի ենթարկելով՝ ցոյց տուեց, որ դպրոցները բնաւ չեն ծառայում իրանց վեհ նպատակին, այն է՝ հասարակութեան ապագայ պիտանի և գործունեայ անդամներ պատրաստելուն։ Մեր դպրոցները նպատակ են դրել միմիայն չոր ու ցամաք գիտութիւններով լցնել աշակերտների գլուխը և նոյնը պահանջել, առանց հնարաւորութիւն տալու աշակերտին՝ իր ինքնուրոյնութիւնն երևան բերելու և ստացածը իրականութեան մէջ գործադրելու։ Մեր աշակերտութիւնը այսպիսով մանկութիւնից սկսած՝ կարծես դատապարտված է միմիայն սովորելու, անվերջ սովորելու և պատրաստի նիւթը իւրացնելու, առանց այդ իւրացրածը իրականութեան մէջ կիրառելու և իր անհատական ուրոյն կնիքը դրոշմելու դրա վրա։

Եթէ այս այսպէս է, ապա էլ ի՞նչ նպատակ ունի միմիայն սովորելը, երբ ոչ մի օգուտ չը կայ, և ընդհակառակը այսպիսով աշակերտը զրկվում է յետագայում ինքնուրոյն գործելու և դժուարին աշխատանքներ կատարելու ընդունակութիւնից. իսկ զրկվելով այս ընդունակութիւնից, աշակերտը զրկվում է նաև ուժեղ ու կազմակերպված կամքից, որովհետև մարդ միմիայն ինքնուրոյն և ծանր աշխատանքի միջոցով կարող է ձեռք բերել այդ։

Այսպէս, ուրեմն, որպէսզի աշակերտի միջից հեռանայ այդ հիւանդութիւնը և ամրապնդվի նրա մէջ կամքի ույժը, ըստ դասախօսի, պէտք է նախ և առաջ մեծ ուշք դարձնել նրա ֆիզիկական, բարոյական և էսթետիկական (գեղագիտական) կողմերը զարգացնելու և ապա վարժեցնել նրան դժուարին և ծանր ֆիզիկական աշխատանքի։ Ֆիզիկական աշխատանք—ահա գլխաւոր միջոցը տիրող չարիքի՝ կամազրկութեան դէմ կռիւ մղելու։ Բայց քանի դեռ մեր դպրոցներում ու ընտանիքներում տիրում են նոյն անբնական կարգերն ու պայմանները, կամազրկութիւնը գնալով աւելի լայն չափերի է հասնում ու կլանում աշակերտութեան։

Ահա մօտաւորապէս դասախօսութեան բովանդակութիւնը։

Դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցաւ վիճաբանութիւն, որին վերջ տուեց ինքը դասախօսը մի քանի ազդու և տպաւորիչ խօսքերով։ Վ. Երկանեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻԹԹԻՀԱԴԻ ԾՐԱԳԻՐԸ*)

—

Իթթիհադականները վերջերս հրատարակեցին իրանց վերջին (1327 թւի) ծրագիրը, որ բաղկացած է 34 յօդուածներից։ Այդ ծրագիրն աչքից անցկացնելով՝ չի կարելի գաղափար կազմել նրանում տիրող ոգու մասին, ուստի և անկարելի է բացատրել իթթիհադականների ընթացքն ու ուղղութիւնը, որով կառավարում են օսմ. կայսրութիւնը երեք տարուց ի վեր։

Այդ ծրագրում շատ զգուշօրէն է խօսվում մանաւանդ այլազան ազգերի՝ տիրող ցեղի հանդէպ ունեցած և ունենալիք դիրքի մասին. բայց միևնոյն ժամանակ չէ մոռացված լռութեամբ անցնել նոյն այդ այլազան ազգութիւնների իրաւասութիւնների ու առանձնաշնորհումների խնդրի վրայից։ Այդտեղ բացատրված չեն ներքին ու արտաքին քաղաքականութեան սկզբունքները, այնպէս որ կասկածվում է, թէ՝ բացի լոյս տեսած այս 34 յօդուածներից՝ կան և չը հրատարակվածներ. ուրիշ կերպով ասած՝ տեսնվածից բացի կան և անտեսանելիներ, որ պիտի որոնել Իթթիհադի տարեկան կօնգրէսների արձանագրութիւնների ու որոշումների մէջ։

Սալօնիկում գումարված տարեկան կօնգրէսների որոշումները թէև գաղտնի են պահվում, սակայն եւրոպական դիւանագիտութեանը գրեթէ միշտ աջողվում է գաղտնի պահված այդ որոշումները ձեռք բերել—անշուշտ կարևոր զոհողութիւնների շնորհիւ—որոնք հրատարակվում են եւրոպական քաղաքական լուրջ թերթերում։

Ես ցանկանում եմ այստեղ նկատի առնել միմիայն անցեալ 1911 թ. սեպտ. 17—27-ին Իթթիհադի՝ Սալօնիկում գումարած տարեկան կօնգրէսի կայացրած որոշումները եօթը կարևոր խնդիրների մասին, որոշումներ՝ որոնք գրեթէ ամբողջացնում են այդ կուսակցութեան յայտնի ծրագիրը և պարզում այս յաւակնոտ «երիտասարդթիւրքերի» քաղաքականութիւնն ու ոգին։

ա) Իթթիհադի քաղաքականութիւնը հպատակ ցեղերի մասին.—Իթթիհադի յայտնի ծրագրի 11-րդ յօդուածում խօսվում է «զանազան հասարակութիւնների կրօնական առանձնաշնորհումների պահպանութեան» մասին։ Սակայն «կրօնական առանձնաշնորհում» դարձուածքը Արևելքում շատ անորոշ է և կարիք ունի բացատրութեան ու լուսաբանութեան։ Եւ ահա այդ լուսաբանութիւնը մենք գտնում ենք Սալօնիկի կօնգրէսում ընդունված որոշումներից հետևեալում, որ ասում է. «Զանազան ազգեր կարող են իրանց կրօնները պահել, բայց լեզուն՝ ոչ»։ Այս բացատրութիւնից յայտնի է դառնում, որ միայն զուտ կրօնի պահպանութիւնն է, որ առանձնաշնորհվում է իթթիհադականների կողմից։

Սալօնիկի կօնգրէսի ընդունած վերոյիշեալ յօդուածում չեն յիշատակված այն միջոցները, որոնցով պիտի բարձվեն հպատակ զանազան ազգերի մայրենի լեզուները։ Սակայն մի այլ տեղ ասվում է, թէ «ցեղերն օսմանցի դարձնելու (այսինքն՝ թիւրքացնելու) գլխաւոր միջոցներից մէկն է թիւրք լեզուի ընդհանրացումը»։ Յիշեալ կօնգրէսը ալբանացիների մասին որոշում է հօջաներ ուղարկել նրանց երկիրն ու արաբական տառերի գործածութիւնն ընդունել տալ նրանց որպէս ազգային այբուբեն և այդ ձևով կրթել նրանց։

Ինչ վերաբերում է այլազան ազգութիւնների զանազան կազմական առանձնաշնորհումներին (օրինակ՝ պատրիարքարանների և սրանց ստորադրված միտրօպօլիտութիւնների ու առաջնորդութիւնների իշխանութիւն և այլն), իթթիհադականները որոշում են ջնջել հիմնովին այդ բոլոր արտօնութիւնները։ Մի ուրիշ տեղ՝ աւելացնում են, թէ հարկ է «զանազան ազգութիւնների կազմակերպումն արգելել», և իրանց այս նպատակին հասնելու համար գլխաւոր զէնք են ընդունում՝ զանազան ազգութիւնների միջև բաժանումն և երկպառակութիւն առաջ բերելու տակտիկան։ Օրինակ՝ Իթթիհադը աշխատելու է Էպիրում ու Թեսալիայում գրգռել ալբանացիներին յոյների ու օրթօդօքսութեան դէմ, պիտի աշխատի բաժանել վալախներին յոյն օրթօդօքսներից և այլն։ Թիւրք ազգայնական այդ կազմակերպութիւնը, վերջապէս, աւելի յստակ կերպով յայտնում է իր ոգին, ընդունելով, ի միջի այլոց, հետևեալ որոշումներ. «Վաղ թէ ուշ՝ անհրաժեշտ է ամեն զոհողութիւն անել՝ օսմանցի դարձնելու (այսինքն՝ թիւրքացնելու) համար բոլոր հպատակ ցեղերին... Այս նպատակին հասնել՝ անկարելի է միմիայն համոզելով, ուստի հարկ եղած դէպքում պէտք է զէնք գործածել...»։

Մի խօսքով՝ «Իթթիհադ» (միութիւն) բառը, ըստ իթթիհադականների, նշանակում է՝ օսմանեան երկրի զանազան բաղկացուցիչ ցեղերը թիւրքացնել, միացնել։ Գոնէ այդպէս են ցոյց տալիս Իթթիհադի՝ մինչև այժմ իւրացրած գործելակերպը և կօնգրէսի որոշումները։

«Իթիլաֆ» կոչված կուսակցութիւնը օսմանեան կայսրութեան բոլոր դժգոհ հպատակ ազգութիւնների միութիւնն է՝ ընկերակցութեամբ բարձրագոյն զարգացում և հեռատես քաղաքականութիւն ունեցող թիւրքերի։ Այս վերջինները խոստովանում են, որ օսմանեան կայսրութիւնը անհնար է կառավարել միմիայն թիւրք տարրի տիրապետութեամբ։ Նրանք ընդունում են, որ կայսրութեան զանազան բաղկացուցիչ ազգութիւններն ու տարրերը հաւասարապէս երկրի տէրը պէտք է նկատվեն և բոլորի գործակցութեամբ միայն ընդհանուր հայրենիքը կարող է բարելավվել։ Նրանք, հետևաբար, ճանաչում են, կայսրութեան զանազան բաղկացուցիչ ցեղերի և սրանց իրաւասութիւնների status quo-ի պահպանումը։ Համաձայն այդ սկզբունքների՝ նրանց ծրագրում կարդում ենք.

«Իւրաքանչիւր տարրի հասարակական կեանքն ու բնական գործունէութիւնը պահպանել» (յօդ. 1)։

«Ոչ-իսլամ ժողովուրդների կրօնական ազատ պաշտամունքն ու կրօնական իրաւունքները և առանձնաշնորհումները առաջվայ նման պէտք է պահպանվեն» (յօդ. 14)։

«Կայսրութեան բաղկացուցիչ տարրերի միութեան աջողութիւնը պիտի փնտռել միմիայն զանազան տարրերի և ցեղերի [illegible] շահերը իրար և օսմ. միութեան հետ հաշտեցնելու մէջ» (յօդ. 16)։

«Օսմ. կայսրութեան զանազան բաղկացուցիչ տարրերին ու կրօններին պատկանող անհատներն ազատ են—միայն՝ օսմ. միութեանը չը վնասելու պայմանով—կրօնական, գրական, գիտական ու տնտեսական աշխատութիւնների ձեռնարկել հաւաքաբար կամ անհատաբար. նաև այս նպատակով կարող են հիմնել իրանց կրօնքին ու ցեղին յատուկ գիտական ու տնտեսական ամեն տեսակ հաստատութիւններ»։

«... Իւրաքանչիւր ցեղ անարգել կերպով կարող է ծառայել այն կրօնքին, որին ինքը պատկանում է, պայմանով, սակայն, որ չը վնասէ միւս ցեղերի և կրօնների հաւասար իրաւունքներին» (յօդ. 17)։

«... Օսմ. ազգութեան անհատներն անհատաբար և զանազան ցեղերն ու հասարակութիւնները հաւաքաբար իրաւունք ունեն գիտական, գրական ու կրօնական ուսումնարաններ հաստատելու» (յօդ. 27)։

Սրանք այնպիսի սկզբունքներ են, որոնք լիովին կը բաւեն շահասիրելու կայսրութեան բաղկացուցիչ բոլոր ցեղերին ու ազգութիւններին՝ առանց խրտնեցնելու թիւրք

---

*) Ի նկատի ունենալով, որ Թիւրքիայի վերջին պարլամենտական ընտրութիւնների ժամանակ դարձեալ յաղթող հանդիսացաւ Իթթիհադի կուսակցութիւնը, հետևաբար երկրի կառավարութեան գործը, ուրեմն և թիւրքահայ ժողովրդի բաղդը դարձեալ մի քանի տարի գտնվելու է այդ կուսակցութեան ձեռքում, մենք դիմեցինք մի ձեռնհաս անձի, խնդրելով պարզել հայերիս համար՝ Իթթիհադի իսկական ծրագիրը և այն հանգամանքը, թէ թիւրքահայերը մինչև այժմ ինչ շահեցին իթթիհադական վարչութեան օրով։ Այդ շահեկան ուսումնասիրութիւնը, որ բաղկացած է երկու առանձին յօդուածից, հրատարակում ենք «Մշակի» այսօրվայ համարից սկսած Խմբ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Վնասներ Ղարաբաղում

Շուշի, 13 ապրիլի

Բնութիւնը սկսել է իր գժութիւնները Ղարաբաղում։ Սրանից մի քանի օր առաջ բարձրացաւ խիստ փոթորիկ, էլ տանիք չը թողեց, բարձրացրեց և գլորեց գետին։ Փոթորիկը այնպէս ջերմ էր, որ խորշակահար արեց բուսականութիւնը։ Արտերի կանաչները լեռներում բաւական դեղնել էին։ Մինչ ժողովուրդը սպասում էր առատ անձրևների, մի քանի օրից յետոյ նորից բարձրացաւ խիստ փոթորիկ, բայց այնպէս ցուրտ, որ մարդիկ հարկադրվեցին նորից սարքել վերցրած վառարանները։ Փոթորկի հետ խառն՝ տեղաց ձիւն, ծածկեց դաշտերը և այգիները։ Ցուրտը այնպէս սաստիկ էր, որ սառեցրեց գետինը։ Ձիւնը երկար ժամանակ մնաց կանգնած՝ ծառերի տերևների վրա։ Այսպէս՝ այն ծառերը, որոնք ծաղկել էին, ցրտահար եղան, բացված ցօղունները և տերևները սևացել են և թառամած կախված մնացել ծառերից։ Այս անժամանակ արհաւիրքը, ինչպէս վկայում են գիւղացիները, սակայն չէ վնասել հացաբոյսերին։ Թէև ամբողջ կանաչները ձիւնի տակ են, բայց աւելի օգուտներ կարող է տալ, քան վնաս։ Այնպէս՝ մրգեղէնների մեծ պակասութիւն կը լինի Ղարաբաղում։

Եղանակի անժամանակ տաքանալը Ղարաբաղում, հարկադրեց դաշտավայրի Թարաքեամա քօչւոր Թուրքերին խուզել իրանց ոչխարներին, բուրդը ծախել և կազմ ու պատրաստ մնալ՝ բարձրանալու լեռները, եայլաղները։ Սովորաբար Թարաքեաման շարժվում է իր ձմեռոցից միշտ մայիս ամսի առաջին կիսում, իսկ յունիսին հասնում է լեռները։ Այս տարի դաշտավայրերում երևացել է մորեխ։ Կառավարութիւնը կարգադրել է՝ ժողովրդին տանել և այդ չարիքին վերջ դնել։ Կառավարութեան այդ հրամանից խուսափելու համար, Թարաքեաման, պատրւակ բռնելով, որ դաշտավայրերի չորութիւնը վնասում է իր հօտերին, ընտանիք, ուղտեր, հօտեր առնելով չւում է լեռները։ Նրանք արդէն կէս ճանապարհին են, գրեթէ լեռների գօտիներում։ Այսպիսի մի կրիտիկական ժամանակ վրա է հասել բուք ու բորանը, ծանր սառնամանիքը։ Աննկարագրելի է նրանց վիճակը. ոչխարները խուզած, իսկ լեռները ձիւնի տակ, ոչ առաջ գնալ են կարողանում և ոչ յետ դառնալ։ Նրանց հասած վնասները ծանր են. կոտորվել են բաւական ոչխարներ։

Այսպէս՝ ապրիլ ամսի բնութեան տուած անբուժելի հարուածը ղարաբաղցիներին բաւական ծանր է։ Ապագան տեսնենք։ *

—

Աղէտներ Գողթանում

Ցղնա, 14 ապրիլի

Մարտի 27-ին եկած ձիւնն ու սառնամանիքը ծաղկաթափ արեց շուտ բացված և ծաղկած ծառերը։ Նորից ամսիս 12-ին և 13-ին սառնամանիք ու մեծ ձիւն եկաւ և նախկին պակասը լրացրեց, փչացրեց մի անգամից բոլոր ուշ ծաղկած ծառերը և վնասեց վազերին ու թթեններին։ Շրջանումս շերամը դուրս էր եկած և մասամբ նոր էր դուրս գալիս, և ահա ցրտից և թթենիները ցրտահար լինելուց զգալի վնաս հասաւ շերամին. պակաս չը վնասվեցին ոչխարատէրերն ու մեղուները։ Մի խօսքով՝ շրջանիս գիւղացիների դրութիւնը անտանելի է և շատ թշուառ ապագայ է խոստանում։

Այդ բաւական չէ, մեծ քանակութեամբ թրթուր է տարածվել և աւերումներ է անում փչացնելով ծառերն և թութի պտուղը։ Մորեխն էլ մեզանից հեռու չէ. արդէն երևացել է Մեղրիի շրջանում։

Մեր գիւղացիները թրթուրի դէմ գիտնական ոչ մի բժշկութիւն չը գիտեն, այլ դիմել են հին սնոտիապաշտութեան։ Գիւղից երկու մարդ ուղարկվել են Ապրակունիսի մօտ Օծասարից (Իլան դաղ)*) թրթուրի բժշկութեան համար «սուրբ» ջուր բերելու (այդ ջուր բերողը պիտի աղբիւրից անխօս բերի տեղ հասցնի)։ Գիւղացիք այդ մանական ջուրը քահանայով, թափօրով, աղօթքով տանում են գիւղիցս 4 վերստ հեռաւորութեան վրա ս. Ստեփաննոսի վանքը, պատարագ անում, զոհեր մատուցանում, ջուրը օրհնում, խառնում ուրիշ ջրերի հետ, բաժանում ուխտաւորներին. վերջինները բերում-սրսկում են իրանց մուլքերի վրա։ Այդ ծիսակատարութիւնից յետոյ, պիտի երևան մեծ երամներով տարմ թռչունը, կոտորի և փչացնի թրթուրներին...

Մորեխի դէմ նոյնպէս բերում են Ակօռի և Յակոբի աղբիւրի ջուրը միևնոյն ծիսակատարութեամբ, սրսկում են արտերի վրա և երբ երևում են տարմի երամները, որոնք մորեխի դէմ պատերազմում և փչացնում են։ Ահա ժողովրդի համոզմունքը թրթուրի և մորեխի դէմ...

Քանի որ գիտութիւնը հեռու է, գիւղատնտեսները չեն շրջագայում գիւղերը՝ իրական փաստերով, գիտութեան զէնքերով գործնականապէս ցոյց տալու գիւղացուն պէս-պէս աղէտների առաջն առնելու հնարը, էլ ինչ անի ջրատար գիւղացին. մնում է նրան էլի հին սնոտիապաշտութիւններին դիմելու, որին աւելի մեծ հաւատով է վերաբերվում, քան թէ անմատչելի, անհասկանալի գիւղատնտեսական գրքերի թելադրութիւններին։

Լևոն Տէրն

—

Անսպասելի ձիւնն և հետևանքը

Ղալաչա, 15 ապրիլի

Չորս օր անընդհատ ձիւն եկաւ. ծառերի և խաղի ծաղիկներն ու տերևներն սպիտակ սաւանի տակից իրանց երեսն էին ցոյց տալիս։

Բաւականին ժամանակ է, որ ոչ ձիւն էր գալիս և ոչ անձրև. ձմեռն անցաւ շատ մեղմ և հեշտ. չը նայելով մթնոլորտային տեղումների բացակայութեանը՝ հայ գիւղերի արտերը շատ լաւն են, չը տեսնված բան է, որ ապրիլի սկզբում մեր արտերն հասկերն հանած ունենան, այլ են թուրքերի արտերի մեծամասնութիւնը. թէև սրանց արտերը ջրովի են, բայց աշնանը ուշ վարվելու և ջրի պակասութեան պատճառով՝ չը ջրվեցին բոլորն, որի պատճառով էլ խանձված են երևում։ Անձրևի ուշանալը հայերին և մտատանջութեան մէջ ձգեց. ըստ հին պապենական սովորութեան գիւղի անչափ մարդկանցից երկուսն սկսեցին դռնէ-դուռ շրջելով «մատաղացուի» համար փող, ալիւր, ցորեն հաւաքել. նոյն իսկ հարևան թուրք գիւղացիները խնդրում էին Հաղբատից «Դալի-խաչը» բերել. ամենքն էլ խնդրում, աղօթում էին, որ նախկին տարիների նման իրանց աշխատանքը չը կորցնէ։ Ապրիլի 11-ին սկսեց ձիւնախառն անձրև գալ, եկաւ ամբողջ օրը, գիշերը. նոյն օրը սաստիկ քամի էր. եկաւ ձիւն ապրիլի 12-ին, 13-ին և 14-ին, այնքան ցեխացաւ, որ անկարելի էր դուրս գալ, շարժվելը. տները, գոմերը բոլորն էլ կաթում էին, գետինն իր բաւականութիւնն առաւ. իւրաքանչիւր փոսում՝ ջրի առուակներ են հոսում. այժմ հաստատ կերպով կարելի է ասել, որ հացի և խոտի մեծ առատութիւն է լինելու, եթէ միայն բնութեան արհաւիրքներից ազատ մնանք։

Չը նայելով որ մեծ օգուտ տուեց այս ձիւնը գիւղացիներին, բայց պատճառեց նաև վնաս. ոչնչացրեց շատ պտղատու ծառերի ծաղիկներ և խաղողի վազերին. «Չողունատար» եղան ոչխարներ, տաւարներ, խոզեր։

Յօրսաքէր

—

Նորութիւններ Բագուից

Բագու, 16 ապրիլի

Եղանակները սկսվեցին լաւանալ. գաւառական քաղաքների չափ բնութեան վերջին օրերի տուած արհաւիրքները այնքան էլ վնաս չը պատճառեցին Բագուի գաւառին. և այդ պիտի բացատրել նրանով, որ Բագուի շրջանը չոր-ցամաք մի վայր է։

Քամին վնասներ պատճառեց նաւթահանքերին, ուր մի շարք վիշկաներ տապալեց։

Եղանակների այդ փոփոխութիւնը ազդեց և երեխաների վրա. առաջացան մանկական մի շարք հիւանդութիւններ, օրինակ ինֆլուէնցա և այլն։

Մելիքեանների վաճառած նաւթահանքերից արդէն դուրս են արել մի շարք բանուորների և շարունակում են դուրս անել. Պիտի ասած, որ զանազան պատճառներով բանուորներից շատերը իրանք են հեռանում։

Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ոչ թէ օտար ֆիրմա է գնել Մելիքեանների նաւթահանքը, այլ յայտնի հին նաւթարդիւնաբերող Էլիաղնազեանցները. բայց իրաւ է, որ այդ վերջինները են գնել և չունին ուրիշ աստառ, այդ առայժմ մութն է մեզ։

Ահա մի քանի օր է, որ Բագու է գտնվում Մանթաշեան նաւթարդիւնաբերական ֆիրմայի ղեկավար Լևոն Ալ. Մանթաշեանը։ Անցեալ օրը նա անձամբ դիտեց Բալախանու շրջանի նաւթահանքերը։

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, առաւօտեան արագ գնացքով Թիֆլիսից դէպի Թեմիր-Խան-Շուրա և ապա Մոսկվա և Պետերբուրգ մեկնեց Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկովը իր ամուսնու հետ։ Նախ քան Թիֆլիսից մեկնելը՝ Կովկասի Փոխարքային ներկայացան Թիֆլիսի փոխ-նահանգապետ Է. Պանօֆը և Թիֆլիսի գաւառի ազնուականութեան պատգամաւորութիւնը։

◆ Այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, քաղաքային վարչութեան շէնքի մէջ կը կայանայ այն յատուկ յանձնախմբի նիստը, որը պաշտօն ունի կազմել նախահաշիւ և կանոնադրութիւն Թիֆլիսում բացվելիք պօլիտեխնիքական դասընթացքների համար։

◆ Ընթացիկ տարվայ յունվարի 1-ից Թիֆլիսի նահանգում գործում են 34 վարկային և 4 փոխատու-խնայողական ընկերութիւններ։ Ընդհանուր մուտքի շրջանառութիւնը հաւասարվում է 642,907 րուբլու, իսկ ծախքինը՝ 636,119 րուբլու. տրված է փոխառութիւն 441,803 ր.։ Բոլոր ընկերութիւններն ունեն 7,886 անդամ, որոնք օգտվում են 697,223 ր. գումարի վարկով։

◆ Թիֆլիսի մի քանի հասարակական հաստատութիւնների ծառայողները որոշել են իրանց ռոճիկներից որոշ տոկոս յատկացնել Թօքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկ. օգտին։

◆ Ծխախոտի գործարանատէր Ա. Էնֆիաճեանը «Սպիտակ ծաղկի» օրը իր գործարանում բանուորներին ձրիաբար բաժանեց բժ. Ա. Շխեանի գրքոյկը Թօքախտի մասին։

◆ Հասարակական ակումբը այսօր նշանակել է էքսկուրսիա դէպի Աւճալա և Մցխէթ։ Էքսկուրսանտները պիտի հաւաքվեն Թիֆլիսի երկաթուղու կայարանում վաղ առաւօտեան։

◆ Կովկասի Փոխարքան թոյլատրեց Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեանը, յիշեալ Ընկ. օգտին կազմակերպել զբօսանք լօտօրէայով ապրիլի 23-ին։

◆ Կովկասի Փոխարքան թոյլ տուեց Կովկասի բեմերի վրա հայերէն լեզուով ներկայացնել «Լեշտուկօվի Նրբափողոցի գաղտնիքները» 5 գործ. պիէսը, փոխադրութիւն Ս. Կլայեկչեանի։

◆ Մօտ օրերս Արքունական թատրօնում կը խաղացվի Ե. Գօրդինի մի նոր պիէսը՝ «Սաֆօ Ֆինգերուտ»։

◆ Այսօր, ցերեկվայ ժամը 11-ին, Վրաց ազնուականների թատրօնում, Ուսուցչական Միութեան կազմակերպութեամբ, տեղի է ունենալու աշակերտական ներկայացում մատչելի գներով. խաղացվելու է «Գրանտ նաւապետի որդիքը»։

◆ Երէկ, վանքի մայր տաճարում, Հայոց Դրամատիկական Ընկ. վարչութեան նախաձեռնութեամբ կատարվեց հոգեհանգստեան կարգ բարեգործ Ալ. Մանթաշեանի մահվան տարելիցի առիթով։

◆ Թիֆլիսաբնակ օսերը խնդրում են քաղաքային վարչութեանը՝ իրանց երեխաների համար առանձին դպրոց բանալ, ուր հնարաւոր լինի աւանդել նաև իրանց լեզուն։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը հրամայեց պրիստաւներին, որպէսզի վերջիններս իրան ներկայացնեն այն գինետների ցուցակները, որոնք գտնվում են ուղղափառ եկեղեցիներին մօտ։ Մտադրութիւն կայ այդպիսի գինետները փակել։

◆ Ապրիլի 20-ին, ցերեկվայ 2 ժամ 15 րօպէին, Միքայէլեան փողոցում տրամվայի № 3 վագոնը ընդհարվեց № 64 վագոնին, որի ժամանակ վերջինիս մէջ նստած հետևեալ անձինք ստացան թեթև վնասուածքներ. Երկրորդ կարգի վաճառական Յակովբ Սրվանեանը ձախ կողքից, Աննա Ֆէօդօրօվան մատի ջարդուածք, իսկ վերջինիս գրկում եղած մանուկը քթի և ճակատի ջարդուածք, Լէօնիա Պրոշինան գլխի վնասուածք։ Նրանց բժշկական օգնութիւն հասցվեց։

◆ Ապրիլի 20-ին ոստիկանութիւնը ձերբակալեց վարչական կարգով աքսորված և ինքնակամ Թիֆլիս վերադարձած Նիկօլայ Դէվդօրինին, որը ենթարկվում է պատասխանատուութեան։

◆ «Սպիտակ ծաղկի» տօնը առանց տխուր դէպքերի չանցաւ. Այդ օրը Գոհարիկ Տէր-Եղիազարեանի գրպանից անյայտ քաղցածներ հանեցին նրա փողամանը, որի մէջ մօտ 70 ր. կար։

◆ Ապրիլի 20-ին Թիֆլիսեցի Ղազար Բէգիջանեանը յայտնեց ոստիկանութեանը, որ նոյն օրը իր որդի Բագրատը՝ դանակը ձեռքին՝ ուզում էր իրան սպանել, սակայն իրան աջողվեց նրան զինաթափ անել։ Բագրատը ձերբակալվեց։

◆ Կովկասեան շերամապահական կայանը Դաղստանի ցուցահանդէսում բացել է իր բաժանմունքը։

◆ Քութայիսում առևտրական դպրոց բանալու համար միջնորդութիւն է յարուցված։

◆ Բագուից, ապրիլի 14-ից, մեզ գրում են. «Երէկ հողին յանձնեցինք մի ծերունի համեստ մարդու, որը Բ. Հ. Կուլտ. Միութեան հիմնադիրն է եղած իր ծրագրով (ուսանողական օրերից գրած) և շատ-շատերից անյայտ մի նախաձեռնող։ Աղմուկներ չը սիրող այդ մարդը մեր քաղաքային սանիտարական բժիշկ Ստեփան Ալիխանեանն էր, որը հեռացաւ լուռ ու մունջ. մենք էլ՝ ինչքան կարելի է՝ թաղեցինք սուս ու փուս։ Բայց կը գայ ժամանակ, որ կասեն՝ օրհնեալ լինի համեստ գործչի յիշատակը»։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

—

◆ Կառապանուհի.—Կօստրոմա քաղաքի Կալիգրիվեան գաւառական բանտում փակված է գողութեան մէջ մեղադրված մի անյայտ կին, որ երկար ժամանակ տղամարդ էր ձևանում և հագնում տղամարդի հագուստ։ Այս բանը պարզվեց մի քննութեամբ, որ կատարեցին բժիշկն ու բանտապետը։ Անծանօթ կինը բացատրեց իր արարքը նրանով, որ հագուստը փոխել ստիպեցին իր հասակակից կանանց ծաղր ու ծանակը։ Բանտարկված կինը բարձրահասակ (2 արշին 9 վերշօկ) է և ունի ահագին ֆիզիկական ոյժ, բարձրացնում է մօտ 15 պուդ ծանրութիւն։ Նա երկար ժամանակ աշխատել է տղամարդկանց հետ՝ կառապանի պաշտօնով ու հիմա 22 տարեկան է։

◆ Դատախազի շնիկը.—Մօսկվայի դատարանի կուլուարներում շատ են խօսում դատական պալատի դատախազ Ա. Վ. Ստեպանօվի շնիկի մասին, որ ահագին իրարանցում է առաջ բերել, ոտքի կանգնեցնելով ամբողջ խուզարկու ոստիկանները։ Մէկը բաց էր թողել դատախազի տան դուռը, արձակ դուրս թողնելով շնիկը։ Այդ շատ գեղեցիկ շնիկը դարձնել տուեց իր վրա դատարանական ծառայողների ուշքը. նրանցից մէկը շնիկը տարաւ պաշտօնատունը, որտեղ նրան սիրով ընդունեցին և կրկին բաց թողին միջանցքում։ Շուտով շնիկը կորաւ. ասում են՝ մի տիկին տարաւ իր հետ, ու առաջ եկան զանազան պատմեներ։

Վառարանները վառող ծառան, որ յանցաւոր է համարվում շնիկը դուրս թողնելում, արձակված է, իսկ մի քանի ուրիշ ծառայողներ՝ տուգանված, մի քանի շվէյցարներ էլ «на чай»-ից զրկված։ Խուզարկութիւնները շարունակվում են։ Երկու օրից յետոյ շնիկը գտնվեց։

◆ Ուսանողի հանձնը.—Ապրիլի 7-ին, երեկոյեան մօտ 6 ժամին, Կազան քաղաքի ոստիկանատունը մտաւ սաստիկ վրդոված տեսքով մի ուսանող ու խնդրեց յայտնել իր ներկայանալու մասին՝ ոստիկանապետ Ա. Ի. Վասիլևվին, աւելացնելով թէ՝ եկել է շատ շտապ ու անյետաձգելի գործով։ Ուսանողին ընդունեցին առանձնարանում և առաջարկեցին նստել։

— Ես չեմ նստի, կալանաւորեցէք ինձ,— ասաց ուսանողը։

Զարմացած ոստիկանապետը հանգստացրեց ուսանողին, խնդրեց որ չը յուզվի և բացատրվի։

— Ինձ վիճակվեց սպանել ձեզ՝ յանձնաժողովի յանձնարարութեամբ,— ասաց ուսանողը,— իսկ ես չեմ կարող։ Ամբողջ օրը ես պահապան էի կանգնած ձեր դռանը, ու հիմա եկել եմ անձնատուր լինելու ձեզ. քանի որ հրամանը չը կատարելու համար ինձ մահ է սպառնում։

— Դուք իսկապէս լուրջ էք ասում,— կասկածելով հարցրեց ոստիկանապետը։— Մտածել էք այն լուրջ պատասխանատուութեան մասին, որ սպառնում է ձեզ։ Ու, վերջապէս, որտեղ է այն զէնքը, որ ուզում էիք գործ դնել իմ դէմ։

— Նախասենեակումն է, վերարկուիս գրպանում։

Իրաւ, այնտեղ գտան մի «բրաունինգ» 8 փամփուշտով։

— Բայց ո՞վ էք դուք ու ովքեր են ձեր ընկերները։

— Չեմ ասի։

Ուսանողին խուզարկեցին ու գտան ուսանողական տոմսակը։ Բանից երևաց, որ այցելուն՝ Կազանի համալսարանի իրաւաբան-ուսանող՝ Նիկօլայ Վլադիսլավովիչ Եանուշևսկին է։ Հեռախօսով հրաւիրեցին դատական պալատի և շրջանային դատարանի դատախազներին, ժանդարմական վարչութեան գլխաւորին ու հաղորդեցին նահանգապետին։ Բայց շուտով Եանուշևսկին յայտնեց, որ ինքը հանաք է արել։

◆ Անթել հեռախօս.—Ապրիլի 13-ին Վարշավայում փորձեր են արել՝ ձեռք բերելու անթել հեռախօս։ Փորձերը աջողվել են։ Այս նոր գիւտը առ այժմ գործադրվում է ոստիկանատների համար, որպէսզի կարելի լինի այսպիսի հեռախօսով արագացնել գործը՝ անյապաղ յայտնելու ամենամօտ թաղամասին։ Անթել հեռախօսը յայտնագործել է տեղական գեղարուեստական դպրոցի մի հրէայ աշակերտ, որ արդէն յայտնի էր՝ շարժողութեան մէջ գտնվող երկաթուղիներից իր արած հեռախօսելու գիւտով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Արքունական թատրօնում

Ուրբաթ, ապրիլի 20-ին, Մարտօվի դրամատիկական խումբը ներկայացրեց Էդմոնդ Գիւրօյի պատմական մի պիէսան, վերցրած ֆրանսիական մեծ յեղափոխութեան կեանքից։ Պիէսան թէև մելոդրամատիկական գոյն ունի, բայց զօրեղ տպաւորութիւն է թողնում։ Գլխաւոր հերոսուհու՝ Մարիայի դերը կատարում էր տ. Գօլօշկովան։

Պէտք է ասել, որ դերասանուհին բաւական աջողութեամբ տարաւ իր դժուարին դերը, բայց որովհետև թատրոնը հազիւ կիսով չափ լի էր, իսկ անսամբլը թոյլ, ուստի պիէսը չունեցաւ սպասված աջողութիւնը։

Այսօր երեկոյեան պիէսը կրկնվելու է։

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

—

«Սպիտակ ծաղկի» օրը, ցերեկով, ինչպէս գրել էինք, Տ. Նազարեանի «Գրական-Գեղագիտական Սալօնը» դարձել էր մի ուխտատեղի, որը բազմաթիւ այցելուներ ունեցաւ։ Տ. Նազարեանը այցելուներին պատմեց իր տպաւորութիւնները արտասահմանեան և կովկասեան կուրօրտների և սանատօրիումների մասին։ Անձրևային եղանակի շնորհիւ ծաղիկ վաճառողներից շատերը յաճախ պատսպարան էին գտնում Գրական-Գեղագիտական Սալօնում։ Երեկոյեան ժամը 9-ից սկսվեց սովորական jour - fixe-ը, café-concert-ային բաժնով։ Բեռլինից մեզ հիւր եկած երիտասարդ բժ. Շահբազեանը խօսեց թոքախտի մասին, անուանելով այդ ախտը հասարակական բնոյթ կրող, որը բուժելի լինելով հանդերձ, ներկայանում է որպէս ժամանակակից տնտեսական ու սօցիալական բացասական կարգերի արդիւնք, որովհետև նրանից տառապողները առաւելապէս ընչազուրկ մասսաներն են։ Որչափ մի հասարակութիւն կուլտուրապէս զարգանում է, այնքան էլ թոքախտի մահացութեան չափը նուազում է։ Թոքախտը, որպէս հիւանդութիւն՝ հասարակական չարիք է, հետևապէս և նրա դէմ պէտք է կռւել հասարակական գիտակցութեամբ, ժողովրդի ինքնօգնութեամբ։ Երիտասարդ բժշկի այդ զրոյցը որոշ թարմութիւն և նպաստաւոր տպաւորութիւն թողեց ներկաների վրա։

Ի միջի այլ հիւրերի, սալօնի jour-fixe-ին ներկայ էր նաև իտալական պետութեան Թիֆլիսի հիւպատոս Վալերին իր ամուսնու հետ։

---

*) Օծասարի գագաթից քիչ ցած հոսում է մի աղբիւր, որ «սուրբի ջուր» է կոչվում և համարվում է իբրև միջոց թրթուրի դէմ։

տարրը։

բ) Իթթիհադականների քաղաքականութիւնը ոչ-իսլամների մասին.—Իթթիհադականների յայտնի ծրագրում այս մասին ոչինչ չը կայ, սակայն կօնգրէսի որոշումների մէջ ասված է.

Երկրի վարչութեան ձևը (պաշտօնէութիւնը) իսլամների ձեռքին պահել։

Իսլամները ամենուրեք իրանց զէնքերը պէտք է պահպանեն. տեղական կառավարութիւնը նոյն իսկ պէտք է զէնք բաժանէ նրանց։

Իսլամների գերակշռութիւնը պիտի ապահովվի՝ օսմանցիացումն ձեռք բերելու համար. Իսլամական պրօպագանդին նպաստել, իսկ հակառակ ուղղութեան պրօպագանդները արգելել։

Իթթիհադականների այս հակասահմանադրական սկզբունքների փոխարէն իթիլաֆականները ընդունում են հետևեալը.

«Օսմ. կայսրութեան զանազան տարրերի միջև քաղաքական ճշմարիտ միութիւն» (յօդ. 1)։

«... Կառավարութիւնը օրինական հնարաւոր օգնութիւնները պիտի ընձեռէ բոլոր տարրերին ու ցեղերին անխտիր» (յօդ. 17)։

Իթթիհադական կառավարութիւնն ամեն կերպ աշխատում է զանազան դժուարութիւններ յարուցանել հպատակ ազգութիւնների ուսումնարանների մասին և, արված դիմումների ու տրված խոստումների հակառակ, ճնշումներ է գործ դնում այդ հաստատութիւնների նկատմամբ, և Սաիդ փաշան նոյն իսկ ծանուցանում է, թէ միջպատրիարքարանային յանձնաժողովի դիմումներին ի պատասխան տրված գրաւոր խոստումները վերջնական չեն։ Հակառակ կառավարական նեղանձնութեան այդ տակտիկային՝ իթիլաֆականները ոչ միայն ճանաչում են այլազան ցեղերի իրաւասութիւնը ուսումնարաններ բանալու խնդրում, ինչպէս վերև ասացինք (յօդ. 27), այլ և ընդունում են այդպիսի ուսումնարանները համարժէք՝ պետական ուսումնարանական նոյնաստիճան հաստատութիւնների և այլն. «... Կայսրութեան բաղկացուցիչ ազգերից որևէ մէկի ուսումնարաններից մինի ծրագիրը եթէ համապատասխան լինի պետական նոյնաստիճան ուսումնարանների ծրագրին, այդ դէպքում այդ ուսումնարանի աւարտող սանը իրաւունք ունի առանց քննութեան ընդունվելու իր աւարտած ուսումնարանի ծրագրից մի աստիճան բարձր ծրագիր ունեցող պետական ուսումնարանում» (յօդ. 27-ի շարունակութիւնը)։

գ) Իթթիհադականների քաղաքականութիւնը Մակեդօնիայի մասին.—Կօնգրէսի որոշումների թւում մեծ տեղ է բռնում Մակեդօնիայի հարցը, և որոշվում է այդ երկրի իսլամ ազգաբնակութեան թիւը աւելացնել՝ իսլամ գաղթականներ բերել տալով գլխաւորապէս Բօսնիայից, որտեղից արդէն 12,000 հոգի բերված և զետեղված են Մակեդօնիայում։ Նոյն կօնգրէսում որոշվում է բերել տալ Բօսնիայից դարձեալ 20,000 հոգի և նրանց տեղաւորել Բուլղարիայի ու Յունաստանի սահմանագլուխների շրջանում։ Եւ կօնգրէսում այդ նպատակով քուէարկվում է և ընդունվում 220,000 օսմ. ոսկի յատկացնելու հարցը։ Ի հարկէ այդ գաղթականներին պէտք է տրվեն այն հողերը, որոնք տեղական քրիստոնեայ ազգաբնակութիւններից են խլված...։

Այդ նոյն կօնգրէսը կարծում է, թէ Մակեդօնիայում յունական ու բուլղարական յաւակնութիւնները կը վերանան, եթէ այդ երկրի քրիստոնեայ տարրը զինաթափ անվի և կայսրութեան նոյն շրջանը իսլամ գաղթականներով լցվի։ Ուստի՝ բնական է, որ մակեդօնական բոլոր ցեղերը գժգոհ մնան այս աստիճան ապօրէն տրամադրութիւնների հանդէպ։

դ) Իթթիհադականների ծրագիրը Հայաստանի մասին.—Լաւ գիտենալով, որ Հայաստանում հայերը զէնքից զուրկ են, իսկ քրդերը զինված, կօնգրէսի՝ Հայաստանին վերաբերեալ ծրագրում ոչինչ չէ ասված զէնքի մասին։ Միայն՝ որոշել են Կովկասից և Թուրքեստանից իսլամ գաղթականներ հրաւիրել և նրանց հողեր տալ ձրիաբար, միաժամանակ արգելելով քրիստոնեաներին (այսինքն հայերին)՝ հող ձեռք բերել, հէնց թէկուզ գնելով։ Սակայն հարկ է համարվում փոքր ինչ յետաձգել այս որոշման գործադրութիւնը։ Եւ միւս մասն հայերը դեռ կարծում են, թէ քիւրդ ու թուրք բռնակալների կողմից յափշտակված իրանց հողերը ետ պիտի ստանան... մինչդեռ իթթիհադականները մտածում են մնացեալ հողերի մի կարևոր մասն էլ խլել և իսլամ գաղթականների տրամադրել՝ այսպիսով հայերին կատարելապէս հողազուրկ ստրուկներ դարձնելով։

(Վերջը միւս անգամ)

Ապա տեղի ունեցաւ գրական-երաժշտական բաժինը։ Սքանչելի գեղգեղանքներով մի քանի ռոմանսներ և օպերային կտորներ երգեց տ. Կօզիւլկեվիչը, արժանանալով բուռն ծափերի։ Ապա երգեցին երիտասարդ երգիչներ Մինասեանը, Դուէլը և Սարգարեանը մի քանի երգեր, որոնք լաւ տպաւորութիւն գործեցին։ Բարօնեսսա Մեզեմը շատ զգացված կերպով արտասանեց երկու արձակ բանաստեղծութիւններ, արժանանալով ներկաների բուռն ծափահարութիւններին։

Տ. Նազարեանը հիւրերին հիւրասիրեց թէյով, շաքարահացով և քաղցրաւենիքներով։ A.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Բագու, 14 ապրիլ

Մեր որբացած հայ բեմի զաւակներից Բագւումն են ներկայումս դրամատիկական խմբի դերասաններ Զարիֆեան, Վրոյր, Ոսկանեան և Ստեփանեան, որոնք միմեանցից անջատ, իրանց շրջապատած տեղական սիրողներով, սկսել են մի շարք ներկայացումներ տալ տեղական ցիրկի շինութեան մէջ։

Ցաւալի իրականութիւնը սակայն այն տեղն է հասցրել, որ այսօր բեմը հայ ժողովրդի ճաշակը կրթելուց երես դարձրած՝ լոկ մուտք ունենալու տեսակէտով է առաջնորդվում։

Եւ հետևապէս զարմանալի չէ, որ դերասան Ստեփանեանը երկու անգամ «Դաւիթ-բէկն» է դնում բեմի վրա, ստանալով առաջին ներկայացումից 1500 ր. և երկրորդից մօտ 800 ր., դերասան Ոսկանեան՝ «Խենթը» նոյն աջողութեամբ և Վրոյրը՝ «Աստղագէտը»։

Իսկ նիւթականից զատ և գեղարուեստականին ձգտող դերասան Զարիֆեանի «Տայֆունը», չը նայած նրա գեղարուեստական մեծ աջողութեան, նիւթապէս տուժեց, ունենալով մօտ 400 րուբլի մուտք միայն, չը նայելով որ այդ երեկոյ հանդիսատեսներով (մանաւանդ ձրիավորներով) լիքն էր ցիրկ-թատրոնը։

«Տայֆունը» ամսիս 8-ին, հայերէն լեզուով առաջին անգամն էր գալիս այստեղ բեմի վրա։

Անցեալ տարի ռուսաց յայտնի մի խումբ տասնեակ անգամ կրկնեց այդ պիէսը և ամեն անգամ Թաղիեվի թատրոնում տեղ չէր լինում, որ և վարձատրեց խմբին լաւ մուտքերով։

Ինչ կարծէք, որ մեր բարձր կարգի հայ հասարակութիւնը այդ ներկայացումներից յետոյ շատ էլ արժէք տալ չէր կարող հայ ներկայացման, ուստի և այդ երեկոյ նա փայլեց իր բացակայութեամբ և զրկվեց մի գեղարուեստական փայլուն բաւականութիւնից։

Այո, և տուժեց, որովհետև նա կարող էր հայ բեմի վրա այդ երեկոյ տեսնել այն իսկական Տօկերամօյին, որին նա հազիւ թէ տեսած լինի։

Բնական ու արհեստական այնպէս էին սերտ ձուլվել Զարիֆեանի խաղում, մանաւանդ սպանութեան տեսարանում, որ շատերն էին ինձ պէս մոռացել, թէ Նիկիտինի ցիրկ-թատրոնում՝ դերասանի են նայում։

Երբ ինձ ասացին, որ մեր բեմի յայտնի վետերանուհի տ. Հրաչեան գնացել դերասանի ճակատը պսակել է իր ջերմ համբոյրներով, գտայ ես միանգամայն այդ «պատիւս արժանաւորաց»։

Իրանց սահուն և աջող խաղով աչքի էին ընկնում այդ երեկոյ նաև տ. տ. Արաքս, Մելիքեան և սիրողներից պ. պ. Աբխատակեան և Պետրոսեան։ Ընդհանրապէս անսամբլը լաւ տարաւ գործը և բազմիցս արժանացաւ ծափահարութիւնների։

Այսօր, երեկոյեան, դերասանուհի տ. Մելիքեանի նախաձեռնութեամբ, ի յիշատակ մեր անմոռաց Գ. Սունդուկեանի, պիտի խաղացվի անմահ «Պէպօն»։ Պէպօյի դերում առաջին անգամ պիտի հանդէս գայ Զարիֆեան։ Մնացեալ դերերում մասնակցողները լինելու են տիկ. Մելիքեան (Շուշան և Եփեմիա), ինժ. Խիզանեան (Գիքօ), Խօջամիր (Յարութիւն), Աբխատակեան (Կակուլի), Գեղամեան (Գիգօլի) և ուրիշ դերասաններ և փորձառու թատերասէրներ, որ յուսանք թէ պատուաւոր կերպով կը տանեն ստանձնած գործը։ Արդիւնքից մի մասը յատկացվելու է Պէպօյի արձանին։

Լուցկի

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիւրքաց քաղաքական շրջաններում և մամուլի մէջ հաւասարապէս դժգոհութիւն է լսվում Սազօնովի ճառի մասին. «Մենք չենք կարող մեզ հանգիստ զգալ,—գրում է «Tanin»-ը,—երբ ռուս մինիստրը իր դեկլարացիայի մէջ այնքան սիրալիրութիւն է շռայլում Իտալիայի հասցէին և ոչ մի բարի խօսք չէ գտնում Թիւրքիայի համար»։ Լրագրին աւելի զայրացնում է ճառի այն մասը, ուր խօսվում է քրիստոնեայ ժողովուրդների պաշտպանութեան ու հովանաւորութեան մասին. «Այդպիսի ճառեր,—բացագանչում է լրագիրը,—տեղին էին միջին դարերում, և ոչ թէ XX դարում։ Ռուս մինիստրը ոչ մի դէպքում չը պէտք է արտասանէր այդ տեսակ խօսքեր, իւղ չածէր կրակի վրա, որովհետև այն ամենը, ինչ որ նա ասում է, կարող է միայն սրել Թիւրքիայի մահմեդականների և քրիստոնեաների թշնամութիւնը։ Թիւրքիան Սազօնովի ճառից յետոյ չէ կարող սպասել Ռուսաստանից բարեացակամ չէզոքութիւն»։

«Իկդամը» միանգամայն անհասկանալի է համարում այն, թէ ինչպէս Ռուսաստանը և Իտալիան կարող են միևնոյն քաղաքականութեան հետևել Բալկանում։ «Մենք պէտք է լրջօրէն խորհենք Սազօնովի ճառի ծածկված իմաստի մասին»—ասում է լրագիրը։

«Սաբահը» գտնում է, որ ռուս մինիստրը չափազանց սառը վերաբերմունք ցոյց տուեց դէպի Թիւրքիան. «Այսուհետև մենք չենք կարող հաւատ ընծայել Ռուսաստանին»։

«Ենի-Գազէտան» վկայում է, որ Սազօնովի դեկլարացիան ծանր տպաւորութիւն գործեց օսմանեան շրջաններում և ուժեղացրեց այն կասկածները, թէ Ռուսաստանը հազիւ թէ անկեղծ է, երբ խօսում է իր լօյալութեան մասին Թիւրքիայի վերաբերութեամբ։

◆ «Б. В.»-ն հաղորդում է, որ ի նկատի ունենալով Թիւրքիայի յամառ խուսափումը Դարդանէլի հարցի լուծումից, Գիրսին ուղարկված է հրահանգ՝ կտրականապէս պնդել, որպէսզի Բ. Դուռը կատարէ բոլոր այն օրինական պահանջները, որոնք հիմնված են գոյութիւն ունեցող միջազգային համաձայնութիւնների հիմունքների վրա։

◆ Դամասկոսում սոսկալի հրդեհը ոչնչացրեց մեծ թւով շէնքեր։ Կան շատ սպանված և վիրաւոր մարդիկ։ Վնասը հաւասարվում է 50 միլիոն ֆրանկի։

◆ Անգլիական պաշտօնական «Daily Chronicle»-ը պնդում է, թէ Սազօնովի դեկլարացիան պէտք է հանգստացնէ Եւրոպային, որովհետև նա ուղղված է ռուսական այն ռազմի կուսակցութեան դէմ, որ մղում էր Ռուսաստանին մինչև օրս նուաճումների Պարսկաստանում, Մոնղոլիայում և ռուս-Թիւրքական սահմանագլխում։ Այդ արկածները կարող էին վերջանալ ընդհանուր եւրոպական պատերազմով։

◆ Թեհրանից հեռագրում են, որ Թեհրանը լցվել է լրտեսներով։ Ոստիկանութիւնը և ժանդարմները կատարում են շարունակ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։ Շատերը կալանաւորվածներից առանց հարցաքննութեան աքսորվում են Թեհրանից։ Դրութիւնը յիշեցնում է Մահմէդ-Ալիի թագաւորութեան վերջին ռէակցիօն օրերը։

◆ «Vos. Zeitung»-ը կշտամբում է Սազօնովին, որ հետևողական չէ։ Բերելով նրա խօսքերը խաղաղասիրութեան մասին, լրագիրը հարցնում է՝ —«Ապա Կուլջիի գրաւումը»։

◆ Գերմանական պալատական շրջաններում չեն թաքցնում այն դժգոհութիւնը, որ արգասիք է անգլիական թագաւորի Գերմանիա այցելելու որոշումը յանկարծ փոխելու։ Այդ յետաձգումը կապում են նոր սպառազինութիւնների նախագծի հետ։

◆ Մինիստրների խորհրդի նախագահ Կոկօվցեվի Լիվադիա գալու առթիւ Պետերբուրգում պտտվում են մի շարք սենսացիոն լուրեր։ Այսպէս օրինակ՝ խօսում են, որ շուտով պէտք է հրաժարական տան ներքին գործերի մինիստր Մակարովը, արդարադատութեան մինիստրը Շչեգլովիտովը, որոնցից առաջինը իբր դառնալու է արդարադատութեան մինիստր, իսկ երկրորդը՝ Պետական Խորհրդի նախագահ Ակիմովի տեղ։ Ներքին գործերի մինիստր, համաձայն լուրերի, նշանակվելու է Պետ. Խորհրդի անդամ Ս. Տատիշչևը։

◆ Ներկայումս «Р. В.»-ի ասելով, կատարվում է Ստոլիպինի սպանութեան գործի քննութիւնը, որ ամբողջովին հետամուտ է ապացուցելու, թէ Բօգրօվը Ստոլիպինին սպանեց սօց.-յեղափ. արտասահմանեան կօմիտէտի որոշմամբ։ Այդ նպատակով քննութիւնը տեղի է ունենում միաժամանակ Կիէվում և Պարիզում։ Այս գործում փոխ-գնդապետ Կուլեաբկօն և միւսները կանչվում են իբրև վկաներ։

◆ Խարկովում ռուս-ասիական բանկի բաժանմունքի դրամատար Դօրօնինը անյայտացաւ յափշտակելով 300 հազար րուբլի։

◆ Ապրիլ 10-ին Պետերբուրգի Օբուխօվի հիւանդանոցում բանուորկին Մարթա Մալինան ծնեց միանգամից երեք զաւակ։ Երեկոյեան դէմ կինը ծնեց չորրորդին։ Մի քանի ժամից յետոյ նորածինները մեռան։ Ծննդկանը իրան լաւ է զգում. Նա 36 տարեկան է։

◆ Մայիսի 1-ի առթիւ խաղաղ բանւորական գործադուլներ եղան Հէլսինգֆորսում և Վարշավայում։

◆ Պորտուգալիայում սպասվում է նոր յեղաշրջում։

◆ Բրիւսէլում բացվեց կանանց միջազգային կոնգրէսը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

20 ապրիլ

ԼՈՆԴՈՆ։ Յօգուտ Ռուսաստանի անբերրիութիւնից վնասվածների հանգանակիչ մասնաժողովը մի կոչ հրատարակեց, որով յորդորում է նուիրաբերել յօգուտ կարիքաւոր ազգաբնակութեան։ Կոչի հեղինակները մատնանշում են, որ դրանով անգլիացիք ամենից լաւ կապացուցեն իրանց անկեղծ բարեացակամութիւնը դէպի ռուս ժողովուրդը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կարմիր Խաչի գլխաւոր վարչութիւնը անբերրիութիւնից վնասվածների բժշկա-սննդիչ օգնութեան համար յատկացրել է մինչև ապրիլ 15-ը 1.804,775 րուբլի։

Ներքին գործերի մինիստրը թոյլատրեց գումարել Պետերբուրգում 1912 թ. դեկտ. 26-ից մինչև 1913 թ. յունվարի 4-ը կանանց կրթութեան առաջին համառուսական համագումար։

«Гроза» լրագրի խմբագիրը ենթարկվեց 500 ր. տուգանքի № 372-ում տպված յօդուածի համար։

Ժանդարմական գնդապետ Մեասօեդօվը արձակվում է պաշտօնից ընտանեկան հանգամանքներից ստիպված։

Սենատը անհետևանք թողեց «Бирж. Вѣд.»-ի աշխատակից Ստեմբօյի վճռաբեկ բողոքագիրը, որին դատաստանական պալատը դատապարտել է 4 ամսով բանտարկութեան Գօլօլօբօվին զրպարտելու համար։

ԲԵԼՖՕՐ։ Կասկածվելով լրտեսութեան մէջ ձերբակալվեց մի շօֆֆէր, որ նկարում էր բերդերի յատակագծերը։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳԲԵԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինովսկայա փողոց, № 8.
(կ. չ.) 416. 100—97

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունել- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տելէֆօն № 1175.
(և. հ. կ.) 888. 100—91

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

10 ՐՈՒԲԼԻ ԱՄԵՆ ՕՐ։ Հեշտ աշխատանք երկսեռ անձերի համար։ Ուղարկեցէք ձեր հասցէն Торг. Дому Бр. Любка. Лодзь. Отд. № 45 Թղթակցութիւնները ռուսերէն։
(կ.հ.) (Л. 4738) 5—3

ՃԱՇԱՐԱՆ „Նովօրօսսիա"
Միխայլօվսկի պր., № 38.
Սրանով յայտնում եմ յարգելի հասարակութեան, որ կերակուրները պատրաստվում են ընտանեկան կերակուրների համով, կաբաբ խիզով։ Ամսական ճաշերը զեղջով։ Տըրվում է կերակուր և տներէ համար։ Ճաշարանում կան Վէյնէրի գարեջուր, Լագիձէի, գործարանի արուեստական հանք. ջրեր թէյ և կաթ։
Յարգ. Ա. Գրիգորեանց
կ.) 255. 2—2

ՀՕՆՈՐՐԷԻ ԴԷՄ
(ՏՐԻՊՊԵՐ)
Փորձված միջոց
ՍԱՆՏՕ-ԿՈՒԲԵԲՕԼ
Ներգործում է արագ և միանգամայն բուժում է սուր և քրօնիկական տրիպպերը։ Իսկականը մետաղեայ արկղիկներում՝ մեր գեղատան [illegible]-կնիքով, 32 կապս. պարուն. արկղ.—1 ր. 25 կ., 50 կապս.—1 ր. 75 կ.։ Դէպօն՝ С.-Петербургъ. Подольская аптека. Подольская 1—81.
Ուղարկ. ենք վերադիր վճ.։ Ճանապարհածախսը ըստ պօստ. սակագնի։ Գտնվում է նաև ամենալաւ գեղատն. և դեղավաճառանոցներում։
(կ.) (П. 34615) 20—11

Բօրժօմի Հասարակական
Ժողովարանը
իր վերանորոգած և ընդարձակած շէնութեան մէջ առաջարկում է բուֆէտի ստանձնումը մայիսի 1-ից։ Ժողովարանում շաբաթ օրերը նուագում է օրկէստրը։ Պայմանների մասին տեղեկանալ նոյն ժողովարանում։
(չ.կ.) 232. 6—5

ՀՕՆՈՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ"
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործածելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ բորբոքը։
ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախսը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։
(կ.) (П. 23620) 52—15

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՕՐԻԱ
(հիմնված է 1860 թ.)
ՈՍԿԷ ՄԷԴԱԼ, ՊԱՐԻԶ 1900 Թ.
ՍԱՊՈՆ ԾԱՂ-ԿՈՂ „ՄԱՆՈՒՇԱԿ"
Ծաղկող «Մանուշակ» գլիցերինեան սապօնը առաջացնում է թարմ մանուշակի իսկական հոտ, թարմացնող մեծաքանակ փրփուր և տալիս է կաշուին փափկութիւն և քնքշութիւն։
Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами— Тифлисъ, Баку, Батумъ.
С. ПЕТЕРБУРГСКАЯ ХИМИЧЕСКАЯ ЛАБОРАТОРІЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ
(22) 4—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿՆԻԿԱՐՄԱՏԻ ՇԱԼՎԱՐԸ
ԿԱՄ ՄՕԴՆԻ ԻՒԲԿԷՆ վօդէվիլ,
հեղինակութիւն Ա. ԽՍԱՅԵԱՆԻ, գինը 20 կոպ.։ Ծախվում է Թիֆլիսում «Գուտենբերգ», «Կենտրոնական»-«Գիր», «Կովկասեան» և «Նոր-Կեանք» գրախանութ, ներում և հեղինակի մօտ՝ Թիֆլիս, Семеновская ул. № 9. Ինձ դիմողները ուղարկեն նաև 15 կոպ. մարկա ճանապարհի և այլ ծախսերի համար։ Գումարով գնողներին հեղինակն անում է 30—50 հատին 25% զեղջ, 50—100 հատին 35% զեղջ, 100-ից բարձր 45%։ Ուղարկվում է նալօժով (անպայման ուղարկել կանխավճար)։ Ծախվում է նաև «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան», նկարներով ու ռեցէպտներով, գինը 50 կոպ.։
(չ. կ.) 181. 10—8

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են հետևեալ գրքերը.

Ս. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ. «Պատմուածքներ»	— 50 կ.
ՏԷՐԵԱՆ. «Բանաստեղծութիւններ»	1 ր. —
ՄՈՒՐԱՑԱՆ. «Գէորգ Մարզպետունի»	1 » 20 »
ՎԱՐԴԱՆԵԱՆ. «Մանուկ աշխարհում»	— 40 »
ՏՈՒՐԳԵՆԵՎ. «Գարնանային ջրեր»	— 35 »
ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆ. «Հայ ժողովրդի ամենամեծ կարիքը»	— 3 »
«Պատանի», ալմանախ V	— 20 »
ԲԺ. Ա. ՇԽԵԱՆ. «Տուբերկուլօզը, թոքախտը և հասարակութիւնը»	— 25 »
ՍՕԼՕՎԵԱՆ. «Քննադատական տեսութիւններ» I	— 50 »
Վ. ՀԻՒԳՕ. «Իննսուն երեքը», վէպ ֆրանս. յեղափոխութիւնից	1 » 50 »

Միևնոյն գրատանը վաճառվում են նոր լոյս տեսած հայերէն և ռուսերէն դասագրքերը։ Ուսումնարաններին, գրադարաններին և հասարակական հիմնարկութիւններին տրվում է զգալի զեղջ։
Դիմել՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля, С. П. Теръ-Исраеліанцъ.
273. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ. հրատարակութեամբ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ յայտնի վիպագիր հանգուցեալ
ՄՈՒՐԱՑԱՆԻ
Գէորգ Մարզպետունի
նշանաւոր պատմական վէպը, որի նիւթը վերցված է X դարից։
Վէպը առաջին անգամն է լոյս տեսնում առանձին գրքով. գիրքը զարդարված է հեղինակի պատկերով, բաղկացած է 672 երեսից։
Գինն է 1 ր. 20 կոպ.
ԱՏ. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆԻ, «ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» վերնագրով գիրքը, որտեղ մտնում է «Ճակատին էն էր գրած», «Թախծումը», «Ախտանիշը», «Ցասում», «Քեզ չնդեցին», «Վաքիլ Բաշին» և «Ուղերձը» աշխատութիւնները . . . . . . 50 կ.
ԺՈՒԿՕՎՍԿԻ, «Քնած արքայադուստրը», պատկերազարդ հէքիաթ. փոխադր. Ա. Թ. Խնկոյեանի . . . . 15 կ.
Պահեստը՝ Կ. Հ. Հրատ. Ընկ. մօտ։
Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։
Մեր հասցէն՝ Тифлисъ, Кавк. Арм. Издательское О-во, Бебутовская ул., № 25.
(24,25,28,29) 275. 5—1

ԻՆԺԵՆԵՐՆԵՐԻ ՃԵՄԱՐԱՆ
ՎԻՍՄԱՐՈՒՄ.
Բալտիկ ծովի մօտ.
Stadt Wismar
Մեքենագէտ ինժեն., էլեքտրո-տեխնիկների, ճարտարապետների և երկրաչափների համար։ (Երկաթէ-բէտօնի և տեխնիկօ-ագրօնօմիայի կօնստրուկցիա)։ Նոր լաբօրատորիաներ։ Ընդունել. պայմանները—6-դաս. գիմնազիա։
(B. 15811) 6—2

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
որ կայանալու է ներկայ 1912 թւի ապրիլի 29-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, Ընկերութեան գրասենեակում, Սօլօլակսկայա փող., տուն Արաֆելովի № 9.
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1) Անցեալ 1911 թւի հաշւի և հաշուեկշռի քննութիւնն ու վաւերացումը, վարչութեան և վերստուգող յանձնաժողովի զեկուցումների հետ, նոյնպէս ծախսերի նախահաշւի և Ընկերութեան գործունէութեան ծրագրի քննութիւնը 1912 թւի համար։
2) Վարչութեան մէկ բացակայ և մէկ ըստ հերթի դուրս եկող անդամների ընտրութիւնները (§ 9)։
3) Վերստուգող յանձնաժողովի երեք անդամի և երեք փոխանդամի ընտրութիւնը (§ 21)։
Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, մայիսի 6-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։
Տպագրված հաշիւը և բաժնետէրերի ցուցակը կարելի է ստանալ Ընկերութեան գրասենեակում։ (22, 28) 253. 3—2

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԱՄԵՆՈՒՐԵՔ
Մ. ԼԱԳԻՁԷ ԵՒ Կº ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ, ՀԱՆՔԱՅԻՆ ԵՒ ԲՈՒԺԻՉ ՄՐԳԱՅԻՆ ՋՐԵՐԸ
Մրգային ջրերը բացառապէս պատրաստվում են քիմիապէս զտված, մրգային և պտղային իսկական հիւթերից, օշարակից և ամենաընտրովի մրգահիւթերից, եռացրած և զտված ջրից ու մաքուր շաքարից։
ՀԱՄԸ և ԱՆՈՒՇԱՀՈՏ ԼԻՆԵԼԸ ԳԵՐԱԴԱՍ։
Ֆիրման պարգևատրված է ոսկէ և արծաթէ մեդալներով՝ ՋՐԵՐԻ լաւ յատկութեան համար։
ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ՝ Թիֆլիսում, Գօլօվինսկի պր. № 6. տելեֆ. 4—11.
Քութայիսում, Պուշկինսկի, № 5.
(կ.) 250. 3—2

ՉՈՒԳՈՒՆ ՁՈՒԼՈՂ ԵՒ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Գ. Զ. ԵԱՐԱԼՕՎ ԵՒ Կº ԱԿՑ. ԸՆԿ.
Թիֆլիսում, Կվիրիլսկայա փող. № 7, Անդրկով. երկ. վարչ. մօտիկ։
Ընդունում է պատուէրներ՝ կառուցումների, փականագործական (слесарныя), կաթսային, գարբնային, խառատային և զանազան մեխանիկական աշխատանքների համար։ Ընդունում է նոյնպէս պատուէրներ չուգունէ և պղնձէ ձուլուածքների՝ համաձայն տրված մակարդակների և կաղապարների։
Պատուէրներն ընդունվում են միանգամայն մատչելի գներով։
Գործարանը պատրաստում է նաև պարտիզի կահ-կարասեղէն։ 261. 10—2
(ե. հ. կ.)

ՆՈՐ ՎԷՊ
ԵՐՈՒԱՆԴ ԳՕՇ
ԿԱՐԱ-ԴԱՐՎԻՇԻ
(Յակովբ Դենճեան)
ԳԻՆՆ Է 50 Կ.
(հ. կ.)
Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում, իսկ Բագու— „Сотрудникъ" գրավաճառանոցում։
Հեղինակից բերել տուողը ճանապարհածախս չէ վճարում։ Վերադիր վճարով 65 կոպ.։ «Ռուս նորագոյն գրողներ» (Սերիա՝ վեց գրքոյկ—Սօլօգուբ, Անդրէեվ, Այզման, Կուպրին, Մօրօզով, Դիմօվ) հետը միասին վերադիր վճարով 85 կոպ.։
Тифлисъ, Іерусалимскій пер. № 12.
Պատրաստվում է տպագրութեան նոյն հեղինակի ֆէլիէտօնները՝ «Գծեր, ներկեր» և պատմուածքների ժողովածուի առաջին հատորը՝ «Կանթեղներ» վերնագրով։
183. 10—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՅՈՎԱԿԻՄ ՍՕԼՕՎԵԱՆԻ
քննադատական մի նոր աշխատութիւնը
Ժամանակակից հայ քնարերգուք. փիլիսոփայութիւնը
Գիրքը բաղկացած է 233 երեսից և բաժանված է երկու շրջանի. առաջին շրջանի մէջ մտել են՝ Յ. Յովհաննիսեան, Յովհ. Թումանեան, Ղ. Մանուէլեան և Ա. Ծատուրեան, իսկ երկրորդի՝ Յ. Յակոբեան, Ա. Իսահակեան, Շ. Կուրղինեան, Վ. Տէրեան և քննադատ Ա. Տէրտէրեան։
Գինն է 50 կոպ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և Բագւում՝ «Сотрудникъ» գրախանութ։ Գումարով գնողներին «Հերմես» տպարան, Թիֆլիս, Գրաֆսկայա փողոց, որտեղ 10 օրինակ գնողը կը ստանայ 20% զեղջ։ Հեղինակի հասցէն՝ Тифлисъ, редакція „Агбюръ-Тараз". 199. 10—8
(հ. կ.)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.